ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ՝ ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՔԱՀԱՆԱ ՇՏԻՐԻ ԿՈՂՄԻՑ՝

Բեռլին 35, Շտեգլիցերի փողոց 69

Զինվորական գրաքննությունը վերացնելուց հետո հնարավոր դարձավ Հայկական հարցի շուրջ մտքերի ազատ փոխանակություն. այդ իր պարտականությունն է համարում 1914թ. հունիսի 15-ին հիմնադրված Գերմանա-հայկական ընկերությունը՝ Հայաստանում տիրող իրավիճակի մասին պարբերաբար հաղորդումներ հրապարակելու միջոցով գերմանական հասարակությանը ստույգ տեղեկություններ տալուն աջակցելու համար:

Գերմանիայում այս բնագավառի, ինչպես սակավաթիվ այլ բնագավառների շուրջ հասարակական կարծիքը ծայր աստիճան անիրազեկ է պահվել: Պատերազմի ողջ տևողության ընթացքում թուրքական դաշնակցի հետ ավելի կամ նվազ բարդ հարաբերությունը հարկադրում էր ղեկավար ատյաններին այստեղ, քան մի այլ խնդրում, ավելի մեծ շրջահայացություն ցուցաբերել: Գերմանական մամուլը, չնչին բացառությամբ, կախված էր թուրքական պրոպագանդական հաղորդագրություններից, որոնք, ինքնին հասկանալի է, այս հարցում պատմության անտեսան շարադրանք համարել չի կարելի: Այդ հաղորդագրությունները սակայն դյուրահավատությամբ ընդունվում էին գերմանական մամուլի կողմից, մասամբ նույնիսկ ուռճացվում էին, և դրանով իսկ թուրքական կառավարության դիրքորոշումն ամրապնդվում էր մի բնագավառում, որտեղ ոչ մարդասիրական, ոչ էլ հայրենասիրական շահերը ցանկալի չէին կարող լինել: Գեթ այժմ իրավիճակի ճշմարիտ պատկերը ներկայացնելը կարևոր է, քանզի Հայաստանն առաջիկա խաղաղության բանակցություններում անկարևոր դեր չի կատարելու: Մենք ի վիճակի ենք տնականորեն ստույգ տեղեկություններ տալ, հատկապես քանի դեռ Հայաստանի հանրապետության ներկայացուցչությունը գտնվում է Բեռլինում: Ավելի լավ պատկերացում տալու համար մենք հարկադրված կլինենք անդրադառնալ նախկին իրադարձություններին:

Մենք հարգարժան խմբագրությանը կանոնավոր կերպով թղթակցություններ կուղարկենք, եթե այդ անցանկալի չդիտվի: Տպագրության դեպքում մենք խնդրում ենք ստուգողական մեկ

---

* Ընթերցողներին է ներկայացվում Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանն առնչվող՝ Գերմանա-հայկական գրագրությունը (1918թ., սեպտեմբեր-դեկտեմբեր), հրատարակված՝ Գերմանա-հայկական ընկերության կողմից: Ներկա հրապարակման աղբյուրը՝ *Օհանջանյան Ս. Ավստրիա-Հայաստան, 1872-1936, Դիվանագիտական վավերագրերի պատճենների ժողովածու, հ. X, 1918, սեպտեմբեր-դեկտեմբեր, Վիեննա, 1995 (գերմաներեն).*

օրինակ, տողավճարը թողնում ենք Ձեր հայեցողությանը: Մենք շնորհապարտ կլինենք, եթե այդ դեպքում օգտագործվի մեր ծածկագիրը՝ ԳՀԸ:

Խորին հարգանքով՝
գերմանա-հայկական ընկերություն:

"Österreich-Armenien, 1872-1936", Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr, Artem Ohandjanian, Band I-XII, Ohandjanianeigenverlag Wien, 1995, p. 7497:

Գերմանա-Հայկական թղթակցություն. Թիվ 1
Հրատարակված՝գերմանա-հայկական ընկերության կողմից
Բեռլին 35, Շտրիգլիցերի փողոց 69
12 նոյեմբերի 1918թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հայերի աքսորը

Թուրքիայի հետ զինադադարի մասին պայմանագրում պիտի պահանջվի տարագրյալ հայերի անհապաղ ազատ արձակումը: Այդ պահանջը թելադրվում է համաշխարհային պատերազմի ամենամռայլ միջադեպերից մեկի հիշողությամբ: Խոսքը վերաբերվում է 1915թ. տեղի ունեցած հայ ժողովրդի աքսորին: Դա թուրք ազգայնամոլության արարքներից մեկն է, որը, ընդսմին, հիշեցնում է Գերմանիայի կողմից էլզասցիների արտաքսումը և Ռուսաստանի կողմից արևմտյան մարզերի ժողովուրդների տարաբնակեցումը: Սակայն այս դեպքում, երբ խոսքն այդ դեպքերում այն իրադարձությունների մասին է, որոնք անմիջական կապ ունեն ռազմական գործողությունների հետ, ապա՝ հայերի աքսորը նախ տեղի ունեցավ Զեյթունում, որը հեռու էր գտնվում պատերազմական գոտուց, հետագայում աքսորը տարածվեց Օսմանյան կայսրության բոլոր հայերի վրա, Կոստանդնուպոլսի և Այդին վիլայեթի (Զմյուռնիա) եզակի բացառությամբ: Թուրքական կողմն այդ միջոցառումը նախ գաղտնի էր պահում և տակավին 1915թ. այն ժխտում էր, ապա փորձում էր արդարացնել հայերի դավադրությամբ, ապստամբություններով և մահմեդական բնակչության դեմ գործած չարագործություններով: Այդ փորձն ամբողջությամբ ձախողվեց, ինչպես նաև Արևելքն իմացող յուրաքանչյուրի համար հենց [սկզբից ձախողման էր ենթակա] այն պատկերազարդ գիրքը, որ թուրքական կառավարությունը հրատարակել էր չորս լեզվով՝ որպես դիվանագիտական հարձակման զենք «Հեղափոխական հայերի նկրտումները և գործողությունները» խորագրով: Այստեղ ներկայացված էին հայերից վերցված զենքեր, կարծես թե Արևելքում ամեն մի ժողովուրդ զինված չի եղել, այնուհետև՝ նկարներ և խորհրդանշաններ, որոնք ամենուրեք հայտնի էին և ոչինչ չէին ապացուցում, քան այն, որ հայերն իրենց պատմությամբ հպարտանում են, վերջապես՝ առանձին ապստամբությունների պատկերներ, որոնք աքսորից առաջ էին տեղի ունեցել:

Սակայն այնտեղ՝ Վանում, այն իրողությունից հետո, երբ իրենց

երկու առաջնորդները սպանվեցին, հայերը ստիպված էին ինքնապաշտպանության դիմել. հայերի մյուս բոլոր այսպես կոչված ապստամբությունները պաշտպանական մարտեր են եղել աքսորի իրականացման դեմ: Տակավին 1915թ. փետրվարին Էնվեր փաշան տվեց հայերի բարեհուսության մի վկայություն, որը հրապարակվեց նաև գերմաներեն լեզվով լույս տեսնող «Օսմանիշե լլոյդ» թերթում, և նույն տարվա օգոստոսին, Ժենևում թուրք գլխավոր հյուպատոսը պաշտոնական հանձնարարությամբ՝ հայերի դեմ ձեռնարկված միջոցառումների մասին Անտանտայի շրջանակներից եկող հաղորդումների դեմ կազմակերպած ցուցահանդեսում հավաստեց, որ հայերի գերակշիռ մեծամասնությունը ոչինչ չի արել, որը կարող էր նրանց դեմ միջոցառում ձեռնարկելու դրդել. որոշ անօրինականություններ են կատարվել, որոնց դեմ օրինական դատ է գնում: Վերջապես այն փաստը, որ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանը մի շարք նոտաներով, ի վերջո, խիստ եռանդուն տոնով բողոք է ներկայացրել հայերին աքսորելու դեմ, կարող էր հայերի անբարեհուսությունը ժխտող բավարար ապացույց համարվել :

Աքսորի իրականացումը

Աքսորը կատարվեց երեք փուլով: Նախ՝ հայերն աքսորվեցին Կիլիկիայից, այնուհետև՝ նրանց արտաքսեցին արևելյան Անատոլիայի վեց նահանգներից, ի վերջո՝ կայսրության արևմուտքից:

Թուրքական կառավարությունը խոստովանել է, որ «վատ պաշտոնյաների մեղքով կարգադրված միջոցառումն իրականացնելիս տեղի են ունեցել մի շարք ցավալի դեպքեր»: Փաստական իրադարձությունների առումով սա շատ մեղմ արտահայտություն է: Հայերը հարկադրված են եղել շատ կարճ ժամանակամիջոցում երեք կամ տեղ-տեղ էլ՝ մեկ օրում իրենց բնակավայրերը լքել, նրանք մեծ մասամբ ոչ մի փոխադրական չպիտի վերցնեին իրենց հետ. իրենց ունեցվածքն առանց որևէ ցուցակագրության բռնագրավվել է կամ խաժամուժին է տրվել: Աքսորյալների տներն այնուհետև շուտով ենթարկվեցին քրդական հրոսակախմբերի հարձակումներին. տղամարդիկ մեծ մասամբ գնդակահարվել են, երիտասարդ կանայք և աղջիկները բաժանվել են թուրքական հարեմներին, մնացյալները միանգամայն անբավարար հոգածությամբ, ոտքով, հազարավոր մարդկանցից բաղկացած թափորով քշվում էին երկրով մեկ և, ի վերջո, Միջագետքի անապատի եզրին ներկայվում էին համակենտրոնացման ճամբարներում: Կեսը ճանապարհին մահանում էր, մնացյալը՝ սովից և տարափոխիկ հիվանդություններից խիստ նվազում էր: Անտանտան այժմ զեկուցում է 250000 փրկված հայերի մասին, մեր հյուպատոսի գնահատմամբ՝ այդ թիվը զգալիորեն մեծացված է:

Աքսորյալների ճակատագիրը

Մենք ճամբարներում տիրող իրավիճակին իրազեկ ենք ճամփորդների զեկուցագրերից (Մվեն Հեդինը նկարագրում է պատերազմին նվիրված իր գրքում Բաղդադը, Բաբելոնը և Կինիվեն) և Անդրկովկասի հայկական թերթերի հրապարակումներից: Մենք պիտի տարբերենք ճամբարների երկու տեսակ: Կիլիկիայի հայերը, որոնք գտնվում էին Ջեմալ փաշայի

իրավասության ներքո, բնակեցվել են Եփրատի երկայնքով և Հառուրանում (Արևելյան Հորդանանի երկրամաս), նրանք իրենց համար տներ են շինել, կարող էին արհեստով և առևտրով զբաղվել և շնորհիվ դրա՝ զերծ են մնացել վատթարագույնից: Արաբ պարետներից ոմանք նրանց նկատմամբ մարդասիրաբար են վերաբերվել, նրանց է հասել նաև աջակցության փողերից որոշ գումար, որը գերմանական և, զգալի չափով, ամերիկյան կողմը հանգանակել էին նրանց համար: Բուն Հայաստանի՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի վիլայեթների բնակչությունը, ընդհակառակը, գրեթե լրիվ առանց օգնության է մնացել, նրանք համարյա ամբողջապես սարսափելի աղքատության են մատնվել և մահանալով՝ նրանց մի չնչին մնացորդն է մնացել: Թուրքահպատակ հայերի թիվը 1845450 է եղել, որից 244400-ը փախել կամ էլ ռուսների առաջխաղացմամբ փրկվել են, 204700-ը Կոստանդնուպոլսում և Զմյուռնիայում կամ էլ այս ու այնտեղ, որպես անփոխարինելի արհեստագործներ և բանվորներ կամ իսլամ ընդունելու շնորհիվ խնայվել են, աքսորը, այդուհանդերձ, ընդգրկել է 1396350 մարդ, որոնցից մոտավորապես ողջ են մնացել 250000-ը: Հետևաբար, հայ ժողովրդի կեսից շատ ավելին զոհ է գնացել թուրքական կառավարության հիշյալ միջոցառմանը:

Իրադրությունը հայկական նահանգներում

Հին հայկական նահանգները վերականգնելու համար զերծ է մնացել միայն հայ ժողովրդի չնչին մասը: Նրանց այժմվանից վերադարձ է թույլատրված: Թուրքիայի նոր մեծ վեզիր Իզեթ փաշան և վաղուց ի վեր հայերի նկատմամբ բարեկամաբար տրամադրված ֆինանսների մինիստր Ջավիդը Հայաստանի հանրապետության՝ Կոստանդնուպոլսում գտնվող պատվիրակությանն ընդունելության ժամանակ, որը գլխավորում են ճանաչված գրող Ահարոնյանը և արտաքին գործերի մինիստր Խատիսյանը, ոչ միայն տուն դարձի, այլև նույնիսկ հայերին կրած վնասների դիմաց հատուցում տալու մասին են խոսել: Այդ, անտարակույս, տեղի է ունենալու: Անտանտայի տերություններից, որոնք ի զորու են հաշտության պայմանները թելադրել, Անգլիան և Ֆրանսիան, ամենից առաջ սակայն Ամերիկան վաղուց ի վեր Հայաստանի նկատմամբ կենսական շահեր ունեն: Թուրքահպատակ հայերը նույնպես, ինչպես և երիտթուրքերը, իրենց պահանջներն են ուղարկել Փարիզ և այլևայլ առնչություններով կապված են Ֆրանսիայի հետ: Պատերազմի ժամանակ մի շարք հավաքներ են տեղի ունեցել Ֆրանսիայում՝ հօգուտ հայերի: Անգլիան հրատարակել է «Կապույտ գիրք» հայերի աքսորի մասին, և իր լավագույն անձանց շրջանում մի շարք հայասեր մարդիկ կան, որոնք այնտեղ, առաջին հերթին քրիստոնյա շրջաններից, հայանպաստ շարժում կծավալեն, տասնամյակներ ի վեր գոյություն ունի «Friends of Armenia» («Հայաստանի բարեկամներ») կազմակերպությունը: Ամերիկան անմիջական շահեր ունի՝ շնորհիվ իր բազմաթիվ միսիաների, որոնք արդեն նախորդ դարի երեսնական թվականներից գործում են Հայաստանում և 40000-ից ավելի հայերի բողոքական դավանանքի են բերել: Ամերիկայից անվերջ բազում նվերներ են ուղարկվում Հայաստանում տուժածների, նաև՝ Անդրկովկասում գտնվող փախստականների համար. այս տարվա սկզբին թուրքերի և գերմանացիների առաջխաղացումը ամերիկյան միսիայի բժիշկների վետերան դոկտոր Ռայնոլդսի

ենթակայության ներքո գտնվող ամերիկացի միսիոներներին ստիպեց իրենց օրինյալ աշխատանքի ցավոտ խնդրին անդրադառնալ:

Տուն վերադարձող հայերը, իհարկե, իրենց հայրենիքը ամայացած են գտնում. ռուսների առաջխաղացման և այժմ վերստին թուրքերի կողմից վերագրավման ժամանակ, հարձակվողները նրանց վրայով են անցել, և եթե այնտեղ ոչ այնպես առատ երկաթյա տեղումներ են եղել, ինչպես Հյուսիսային Ֆրանսիայում, ապա պատերազմը Արևելքում ավելի մեծ անողոքությամբ է վարվել: Այնտեղ, ինքնին հասկանալի է, մահմեդականների առաջխաղացման ժամանակ՝ քրիստոնյաները, և վերջիններիս առաջխաղացման ժամանակ՝ կրկին իսլամ դավանողներն են փախուստի դիմել: Գյուղերը հրկիզված են, քաղաքները ոչ սակավ քանակով ավերված են, վարելահողերը տարիներ ի վեր չեն մշակվել: Երկիրը ռուսների կողմից գրավելուց հետո ռուսները գեղջկական գումարտակներ են բնակեցրել, որոնց թիվը սակայն 10000-ից չի անցել: Թուրքերին հաջորդել են մուհաջիրներ՝ Բալկաններից եկած վերաբնակիչները: Բայց նրանց թվաքանակն էլ չէր կարող մեծ լինել: Երկիրը մեծ մասամբ մարդազուրկ անապատ է:

Սակայն դա այդպես չի կարող մնալ: Հայը ունի զարմանալի տոկունություն և համբերություն, որը նա ձեռք պիտի բերեր երկրի նախկին համաբնակիչների՝ քրդերի դեմ մշտապես մղվող պայքարում: Որքան էլ նրանց տները հաճախ հրկիզվել են քուրդ հրոսակների կողմից, նրա բերքը և անասունները կողոպտվել, նրա վարելահողերը ամայացվել են, նա դարձյալ ավերվածը վերականգնել է: Ասացվածք դարձած հայի ջանասիրությունը դադար չի առնի, եթե երկրում նորից իշխի օրինական իրավիճակը: Եթե ավերածությունների համար առաջիկայում հատուցումներ տալու առումով Անտանտայի կողմից Թուրքիայի վրա գործադրված ճնշումը չմնա սոսկ թղթի վրա, ինչպես նախկինում մշտապես պատահել է երիտթուրքերի կառավարության խոստումների դեպքում, ապա Հայաստանը շուտով նորից կվերականգնվի: 100-200000 վերապրած թուրքահպատակ հայերն իհարկե երկիրը բնակեցնելու համար բավարար չեն: Սակայն 200-300000 դեպի Ռուսաստան փախած, ներկայումս Անդրկովկասում սուղ պայմաններում գտնվող հայերն իրենց հին հայրենիքը կգտնեն վերադառնալ, նրանց [թիվը] կլրացվի համիդյան կոտորածների և հետագայում Ամերիկա վերաբնակության գնացած հայերով դրան կավելանա խիտ բնակեցված Կովկասյան Հայաստանից նոր բնակիչների մի հոսք դեպի ցեղի վաղեմի երկիրը, եթե այնտեղ տանելի պայմաններ վերահաստատվեն: Ընդսմին, հայ ժողովուրդը շնորհիվ իր նահապետական ընտանեկան հարաբերությունների ունի ժողովրդի թվաքանակի աճի ոչ սահմանափակ ունակություն: Երբ Հունաստանը ազատագրվեց թուրքական լծից, ամբողջ թագավորությունն ուներ միայն 400000 բնակիչ: Եթե Հայաստանը դրանից ավելին չկարողանա ունենալ, ապա ոչ հեռավոր ժամանակներում վերջնստին կդառնա մի իսկական ժողովուրդ, որն ուշադրության արժանանալու իրավունք կունենա:

Թուրքահայաստանի ապագա պետական կառուցվածքը

Ավելի մեծ կարևորություն ունի իհարկե այն խնդիրը, թե ի՞նչ պայմաններում է վերածնվելու նոր Հայաստանը: Մինչև համաշխարհային պատերազմի սկսվելը հայերը չեն մտածել ինքնուրույն պետականության մասին: Այն ամենն, ինչ այդ առթիվ թուրքական և թուրքամետ կողմից պնդվում է,

պատկանում է առասպելաբանության բնագավառին: Հայ ժողովրդական կուսակցություն՝ Դաշնակցությունը, որը շնորհիվ իր լայնորեն տարածվածությանը հանդիսանում է ժողովրդի իսկական ներկայացուցիչը, երբեք այլ բան չի պահանջել, քան կյանքի և կայքի ապահովություն և մշակութային ինքնավարություն թուրքական գերիշխանության ներքո: Սահմանադրական կարգերի հենց սկզբից Դաշնակցությունը միշտ ընթացել է երիտթուրքերի հետ: Գերմանիայի ազդեցությամբ պատերազմից առաջ ընդունված և մասամբ արդեն գործի դրված բարեփոխումները, որոնք թույլ էին տալիս Հայաստանը տոկոսային հարաբերությամբ բաժանել չեզոք պետություններից ընտրված գլխավոր տեսուչների կողմից կառավարվող նահանգների, արժանացան հայերի կատարյալ հավանությանը, որը որոշակիորեն ընդունեց նրանց պաշտոնական ներկայացուցիչ՝ Պողոս Նուբար փաշան:

Այժմ, սակայն, նրանց ինքնուրույն պետականություն ունենալ է վիճակվել: Ամերիկացիներն երբեք չեն համաձայնվի, որ հայերը վերստին թուրքերի անտնտեսվարության ներքո հայտնվեն: Թուրքերը, իրոք, ի վիճակի չեն որևէ կանոնավոր կառավարում կազմակերպել: Ողջամիտ թուրքերն անձամբ այդ ընդունել և հաստատել են: Հայաստանը թուրքական գերիշխանության ներքո կլինի անհանգստությունների մշտական աղբյուր, մի բաց վերք Օսմանյան կայսրության մարմնի վրա: Այստեղ միայն անջատումն է օգնում: Գերմանական ողջախոհ կողմը փորձել է ներշնչել թուրքերին, որ եվրոպական և ասիական նահանգների կորուստը տանելի կլինի, քանզի նրանք դրանով իսկ կհասնեն կայսրության կենտրոնացման դրա հզորության կենտրոնի՝ թուրքական Անատոլիայի շուրջը: Դա առնվազն նույն չափով վերաբերվում է Հայաստանին: Թուրքերը լավ կանեն, եթե հիմա Հայաստանում բնակվող մահմեդականներին տանեն Անատոլիա. այդ օրինակ վերաբնակեցումը պատերազմի հետևանքով վիթխարի արյունահեղությունից անմիջապես հետո շատ հեշտությամբ կարելի կլինի տանել: Նմանօրինակ վերաբնակեցումն Արևելքում սովորական է և դյուրին իրագործելի, քան Եվրոպայում: Թուրքիան, որի իմպերիալիզմի երազանքը, որը պատերազմի վերջին ամիսներին՝ մինչև անմիջականորեն խորտակումն անսահման չափեր էր ընդունել և տարածվում էր մինչև Թուրքեստանը, վերջնականապես դադարել է երազել այդ մասին: Եթե Թուրքիան իրոք ցանկանում է ուժեղանալ, ապա այն առանց օտար տարրերի խառնուրդի սեփական ցեղի սահմանափակ տարածաշրջանում քրտնաջան աշխատանք պիտի ձեռնարկի: Հայաստանին լիակատար ազատություն տալը համապատասխանում է նաև թուրքական ճիշտ ընկալված շահերին:

Իրադարձություններն անդրկովկասյան Հայաստանում

Թուրքիային ենթակա Հայաստանը սակայն ընդգրկում էր մոտավորապես ժողովրդի միայն կեսը: Մյուս կեսը բնակվում էր ռուսական տարածաշրջաններում. գրեթե 100000 էլ բնակվում է սահմանակից պարսկական Ադրբեջանում: Անդրկովկասի բնակչության վերաբերյալ մենք Ռուսաստանի վերջին մարդահամարի թվերի հետ մեկտեղ ունենք նաև այսպես կոչված կովկասյան օրացույցի ցուցակները, որոնք խարսխվում են գավառապետերի, նահանգապետերի և ազգային կազմակերպությունների հաղորդագրությունների վրա:

Դրանց համաձայն՝ 1897թ. ամբողջ Անդրկովկասում կար 1079100,

1916-ին՝ 1781600 հայ. նրանք ավելի մեծ թվով են աճել, քան վրացիները, որոնք 1897-ին ունենալով 1340600 թվաքանակ, տակավին գերազանցում էին հայերին, սակայն 1916թ. ունենալով 1780300 թվաքանակ, հետ էին հայերից: Կովկասյան ժողովուրդներից ավելի մեծաքանակ էր երրորդը՝ թուրքերին ցեղակից թաթարները, որոնք 1897-ին հաշվվում էին 1442900 [մարդ] և այժմ 2 միլիոն են կազմում: Ռուսական հեղափոխության հաղթանակից հետո, արդեն 1917թ. մարտի կեսերին Թիֆլիսում և դրա օրինակով այլ քաղաքներում և տարածաշրջանի գավառներում կյանքի կոչվեցին գործադիր կոմիտեներ, որոնք պատվիրակներ ուղարկեցին Թիֆլիս՝ կենտրոնական գործադիր կոմիտե, որի շնորհիվ ստեղծվեց կովկասյան ընդհանուր կառավարություն: Այն կազմված էր հինգ անդամներից, որոնք ընտրվել էին հայերից, վրացիներից և թաթարներից, մի ռուսի նախագահությամբ: Սակայն իրական իշխանություն ունեին, ինչպես և ամբողջ Ռուսաստանում, կառավարությանն առընթեր բանվորական և զինվորական սովետները: 1917թ. նոյեմբերին կովկասյան կառավարությունը հրաժարական տվեց, քանզի այն զգում էր իր անզորությունը. նոյեմբերի 24-ին Կովկասի համար ընտրվեց մի նոր ժամանակավոր կառավարություն, որը հենվում էր ազգային սկզբունքի վրա: Անվանապես առկա կովկասյան ընդհանուր կառավարության կողքին ի հայտ եկան առանձին ազգային խորհուրդներ՝ առանձին ազգությունների համար: Կովկասի 40000 թվաքանակ ունեցող գերմանացիները նույնպես իրենց սեփական ազգային խորհուրդն ունեին: Ֆեդերատիվ կառավարության որոշումներն ամբողջապես կախված էր ազգային կուսակցությունների համաձայնությունից: 1917-ի վերջին թուրքական գերագույն հրամանատարության առաջարկով Էրզնջանում զինադադար կնքվեց, միաժամանակ սկսվեց ռուսական բանակի կազմալուծումը: Դա օգտագործեց թուրքական գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան՝ չնայած զինադադարին, կովկասյան տարածաշրջանում առաջխաղացման ձեռնարկումով: Կովկասցիները դիմադրում էին, սակայն իրականում միայն հայերն էին մարտի մեջ մտնում: Այժմ արդեն Վեհիբ փաշան ջանում էր թուրք-կովկասյան հաշտության առանձին պայմանագիր կնքել, սակայն ձգձգում էր բանակցություններ սկսելը, որոնք Տրապիզոնում պիտի կայանային, որովհետև այդ ընթացքում կնքվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը թուրքերին էր տալիս 1877թ. սահմանները. այսպիսով Բաթումի, Կարսի և Արդահանի մարզերը անջատվում էին հօգուտ թուրքերի: Թուրքերն այդ ժամ ներխուժեցին այդ մարզերը, դրանց միացան թաթարական և քրդական հրոսակախմբերը, որոնք բազում հայեր կոտորեցին: Թվում էր, թե քրիստոնյա ամբողջ բնակչությունը պիտի բնաջնջվի այդ տարածաշրջանում մահմեդական ապագա գերիշխանությունը ապահովելու համար: Մարտնչող հայկական բանակի թիկունքում կատարվող այդ հարձակումները հարկադրեցին նրան տրոհվել՝ վտանգված հայրենիքը պաշտպանելու համար: Ընդհանուր վտանգը կովկասյան ժողովուրդներին է՛լ ավելի մերձեցրեց միմյանց, կովկասյան կառավարությունն իրեն անկախ հռչակեց: Տրապիզոնում ընթացող բանակցությունները սակայն շուտափույթ ավարտ ունեցան, քանզի թուրքական պատվիրակության նախագահ Ռաուֆ բեյը մի վերջնագիր ներկայացրեց. երեք օրվա ընթացքում պիտի ընդունվեին Բրեստի պայմանագրի պայմանները: Անդրկովկասի հանրապետությունը հաշտության բանակցությունների մի նոր պատվիրակություն ուղարկեց Բաթում, բայց այնտեղ թուրքական պատվիրակության

նախագահ Հալիլ բեյն ամբողջապես նոր, հեռուն գնացող պահանջներ ներկայացրեց և պահանջեց հետևյալ կովկասյան տարածաշրջանների տարանջատումը. Սուրմալուի ամբողջ գավառը, Ալեքսանդրապոլի գավառի մի մասը, Ախալքալաքի գավառը, Ախալցխան, Երևանի և Էջմիածնի գավառների մի մասը, որոնք մեծ մասամբ հայերով են բնակեցված: Մայիսի 15-ին անդրկովկասյան զորքերի հրամանատար, հայ գեներալ Նազարբեկովը հրաման ստացավ՝ երեք ժամվա ընթացքում դատարկել Ալեքսանդրապոլ քաղաքը և երկաթգիծը՝ մինչև Ջուլֆա պարսկական սահմանին հարող կողմը: Առավոտյան ժամը 7-ին սկսվեց Ալեքսանդրապոլի հրետակոծությունը, թուրքերը գրավեցին պահանջված տարածաշրջանները և 18-ից մինչև 50 տարեկան արական սեռի բոլոր անձանց գերավարեցին: Մայիսի 26-ին Հալիլ բեյը մի նոր վերջնագրով պահանջեց երեքօրյա ժամկետում արդեն հիշատակվածներից զատ, մի նոր տարածաշրջանի՝ Նախիջևանի գավառի Շարուր-Դարալագյազի շրջանի մի մասի և Երևանի գավառի մի այլ շրջանի դատարկում: Անդրկովկասյան սեյմը քայքայվեց, քանի որ վրացիները հռչակեցին իրենց անկախությունը: Հայաստանը որոշ ժամանակ հապաղում էր, հունիսին այն հարկադրված նույնպես հռչակեց իր անկախությունը և կազմեց Հայկական հանրապետություն: Առանց հետագա աջակցության կովկասյան պետությունները պիտի հաշտության գային Թուրքիայի հետ: Հայաստանին մնաց ընդամենը միայն մի տարածաշրջան՝ 10000 քառակուսի կիլոմետր մակերեսով և 350000 բնակիչով, որը, ընդ որում, բաղկացած էր Գյոկչա մեծ լճից և անմարդաբնակ լեռներից: Այդ երկիրը հազիվ թե կարող լինի սեփական բանկչությանը կերակել: Դրան է ավելանում նաև թուրքերի կողմից գրված շրջաններից փախստականների վիթխարի չափերի՝ 800000-ը գերազանցող թվաքանակը:

Կովկասյան հայերի պահանջները

Ինքնին հասկանալի է, որ Հայաստանն ներկա վիճակի [սահմաններով] չի կարող սահմանափակվել: Խոսքը վերաբերվում է 54000 քառակուսի կիլոմետր մակերես և 1791000 բնակչություն ունեցող մի տարածաշրջանի, որում հայերը՝ 1169000, մահմեդականները՝ 540000 են կազմում, դրանից զատ՝ 7000 վրացի,* 25000 եզդի և 50000 այլ ազգությունների ներկայացուցիչներ: Այս տարածաշրջանը սակայն անվիճելի չէ. վրացիները դրանից հավակնում են 9400 քառակուսի կիլոմետր և 213420 բնակիչ ունեցող տարածքի, թաթարները՝ 13500 քառակուսի կիլոմետր 505000 բնակիչ ունեցող տարածքի նկատմամբ: Վերջին իրադարձությունները թույլ են տալիս վրացիների հետ փոխըմբռնումը հավանական համարել. թուրքերի ետ քաշվելը, հավանաբար, թաթարներին ավելի համեստ կդարձնի:

Հայաստանի կառավարության կազմումը

Հայ ազգային խորհուրդը, որը սկզբնապես իրագործում էր կառավարության իշխանությունը և որի նստավայրը Թիֆլիսում էր, մի քանի ամիս առաջ իր նիստը գումարեց Երևանում՝ Հայաստանի մայրաքաղաքում, և կազմավորվեց որպես հայկական պառլամենտ: Վերջինս ունի 46 անդամ,

* Վավերագրում սպրդել է ակնհայտ վրիպակ, անտարակույս սխալ է նշված վրացիների՝ 7000 թվաքանակը:

որոնցից 6 մահմեդական, 1 եզդի, 1 ռուս և 38 հայ: Վերջիններս բաժանվում են ըստ կուսակցությունների հետևյալ կերպ. դաշնակցությունն ունի 18, ազգային-դեմոկրատները (կադետներ)՝ 6, սոցիալ-դեմոկրատները՝ 6 (դրանց թվում՝ 1 բոլշևիկ, մյուսները մենշևիկ են), սոցիալ-ռևոլուցիոներները 6 ներկայացուցիչ ունեն, 2-ը անկուսակցական են: Հայաստանի Հանրապետությունն ունի կատարյալ դեմոկրատական սահմանադրություն, ամբողջ իշխանությունը պատկանում է պառլամենտին, Հանրապետության նախագահ գոյություն չունի, միայն մինիստրություն կա՝ որպես ժողովրդական ներկայացուցչության մարմին: Վարչապետն է նախկին ճարտարապետ Քաջազնունին, արտաքին գործերի մինիստրն է Թիֆլիսի երբեմնի քաղաքագլուխ Խատիսյանը, որն ականավոր հռետոր է: Ներքին գործերը, փախստականների խնամածությունը գլխավորում է Արամը՝ Վանի պաշտպանների պաշտամունքը, ֆինանսները և առևտուրը գլխավորում է իրավաբան Կարճիկյանը, պաշտպանությունը՝ գեներալ Հախվերդյանը, արդարադատությունը՝ Տեր-Պետրոսյանը, միայն վերջինս է անկուսակցական, մյուս բոլորը Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամներ են:

Սակայն առաջիկայում մինիստրություններից կոալիցիոն կառավարություն է կազմվելու: Պառլամենտում քննարկումները կարող են տեղի ունենալ ցանկացած լեզվով: Հայերեն բոլոր ելույթները թարգմանվելու են ռուսերեն և թուրքերեն. կառավարության գրագրությունները կատարվում են հայերեն և ռուսերեն լեզուներով, այնպես որ ազգային փոքրամասնությունները բավականին իրավունքներ ունեն: Նույն կերպ՝ պահպանել են ծառայած ռուս պաշտոնյաներին:

Կովկասյան Հայաստանը սեփական պետականության սկիզբն է դրել: Հայաստանի հանրապետությունն արդեն ճանաչվել է Թուրքիայի կողմից, ընդհակառակը՝ Ռուսաստանի և այդ պատճառով նաև Գերմանիայի կողմից տակավին ճանաչված չէ: Այդուհանդերձ Հայաստանի հանրապետությունն այս տարվա մայիս ամսվանից իր լիազոր ներկայացուցիչն է ուղարկել Բեռլին, դրանից հետո՝ անկախությունը հռչակելուց առաջ, այնտեղ է ժամանել հայ ազգային խորհրդի մի պատվիրակություն՝ Գերմանիայի կառավարության հետ հարաբերություններ հաստատելու համար. այն ժամանակվա ներկայացուցիչներից մեկը Թիֆլիսում համառոտ տեղեկություն է հայտնել Թիֆլիսի «Կառուկազիշե պոստ» գերմաներեն լեզվով լույս տեսնող թերթի թղթակցին Բեռլինում ստացած իր տպավորությունների մասին: Այնուհետև՝ Հայաստանի հանրապետությունն իր ներկայացուցիչն ունի Թիֆլիսում՝ վրացական, և Կիևում՝ ուկրաինական կառավարություններին առընթեր: Կոստանդնուպոլսում է գտնվում, ինչպես արդեն վերը հիշատակվեց, բազմաթիվ անդամներից բաղկացած պատվիրակություն:

Հայաստանի ապագան

Հարց է ծագում՝ ինչպե՞ս է Անտանտան վերաբերվելու նոր պետությանը. արդյոք Անտանտան գտնո՞ւմ է, որ Ռուսաստանն իր ամբողջ ծավալով վերականգնվելու է, կամ՝ արդյոք Անտանտան Վիլսոնի ծրագրին համապատասխան ռուսական կայսրության առանձին ժողովուրդներին ինքնորոշման իրավունք վերապահելո՞ւ է: Թուրքիային ենթակա Հայաստանին անկախ դարձնելը միայն այն դեպքում լիարժեք կլինի, եթե այն ի վիճակի լինի միանալու ցարդ Ռուսաստանին ենթակա տարածաշրջանում

ապրող ազգակիցների հետ: Հայերի նպատակը պետք է լինի Հայկական պետականության վերականգնումը, որն իր մեջ կներառի ժողովրդի երկու մասերը: Գերմանիան չնչին շահ անգամ չունի այսօրինակ պետության կազմավորմանը խեթ աչքով նայելու: Այն, ընդհակառակը, պիտի ցանկանա մեծատաղանդ և ջանասեր հայ ժողովրդի հետ, որի որդիներից հարյուրավորները պատերազմից առաջ գերմանական բարձրագույն դպրոցներում էին ուսանում և գերմաներեն լեզուն ու կրթությունը տարածում էին հեռավոր Արևելքում, անխախտ հարաբերություններ պահպանել: Հայերն ի բնե միջնորդներ են Արևելքի և Արևմուտքի միջև, նրանք եվրոպական մշակույթ կրողներ են այն վայրերի համար, որոնք այդչափ կարիք ունեն մշակույթի:

Հայկական սփյուռքը

Թուրքահայաստանի և Ռուսահայաստանի միավորումից հետո էլ (ընդ որում Կիլիկիայի մի մասը նույնպես բաժին է ընկնելու հայկական պետությանը) տակավին բազում հազարավոր հայեր մնալու են երկրից դուրս: Թուրքիան շարունակելու է հայերին պահել Կոստանդնուպոլսում և ծովափնյա այլ քաղաքներում, Բուլղարիան, Ռումինիան, Հունգարիան ունեն հայկական նշանակալի գաղութներ: Այդ հայերի համար հարկ է պահանջել իրավունքների երաշխավորություն, որը կարող են պահանջել ազգային փոքրամասնությունները իրավական պետության կազմում: Հայկական սեփական մի պետության գոյությունը կապահովի այդ օրինական պահանջներին անհրաժեշտ աջակցություն: Այն ժամանակ, երբ հայերը թուրքական կայսրությունում մյուս բոլոր օտար ազգերից ամենաանպաշտպանվածն էին այդօրինակ աջակցության բացակայությունը չէ՞ր, ի վերջո, դրա պատճառը, որպիսին, օրինակ, ունեին հյուները, որոնք այնտեղ նույնպես նման իրավիճակում էին գտնվում:

Ուրեմն կարելի է հուսալ, որ Հայկական հարցը, որն ավելի քան կես հարյուրամյակ զբաղեցնում է քաղաքակիրթ ժողովուրդների ազնիվ և մարդասիրորեն մտածող շրջանները, ակնկալվող հաշտության բանակցությունների շնորհիվ վերջապես օրակարգից կանհետանա:

"Österreich-Armenien, 1872-1936", Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr, Artem Ohandjanian, Band I-XII, Ohandjanianeigenverlag Wien, 1995, pp. 7498-7505:

Գերմանա-հայկական թղթակցություն. Թիվ 2
Գերմանա-հայկական ընկերության հրատարակություն
Բեռլին 35, Շտեգլիցեր փողոց 69
25 նոյեմբերի 1918թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Անտանտայի կշտամբանքները

Անտանտայի մամուլում մշտապես գերմանական կառավարության

դեմ կշտամբանքներ են հարուցվում, որ գերմանական կառավարությունը կկարողանար հայ ժողովրդի տարագրությունը կանխել, եթե միայն նա ցանկանար: Ուրեմն, պետք է, որ նա այդ խնդրում թուրքական կառավարության հետ համերաշխ է եղել: Այո, այնքան հեռուն են գնացել տարագրության, իր ամբողջ դաժանություններով հանդերձ, բուն նախաձեռնողին տեսնելու խնդրում [, որ] գերմանացի բարբարոսների հանցանքների հաշվեկշռում բելգիացիների կողքին դրվում են նաև հայերը: Ընդսմին բերվում է հետևյալ պատճառաբանությունը: Քառյակ դաշինքում Գերմանիան, անկասկած, առաջատար տերություն է: Թուրքիան ամեն ինչում նրանից է կախված: Թուրքիան Գերմանիայի կողմից առանց սեփական հակումի պատերազմի մեջ է ներքաշվել: Նա պատերազմը մղելու միջոցները, ամենից առաջ՝ պատերազմ մղելու համար անհրաժեշտ փողը Գերմանիայից է ստացել: Գերմանացի զորավարներն են մշակել պատերազմի ծրագրերը, գերմանական զորքերն են վճռել ինչպես Դարդանելի, այնպես և Կուտ-էլ-Ամարայի մարտերի բախտը: Մինչև գերմանացիների գալը, թուրքերը Կովկասյան ճակատում Էնվերի հրամանատարությամբ միայն պարտություններ էին կրում. այն պատճառով, որ գերմանացիները հետ քաշվեցին կամ հետ ուղարկվեցին, Թուրքիան կորցրեց Էրզրումը: Թուրքիան չի կարող ոչինչ անել առանց գերմանացիների օգնության, ուրեմն Թուրքիան ամեն ինչում պիտի հետևի Գերմանիայի ցանկություններին, և սա թուրքերի ձեռնարկումներում (ամենից առաջ այնպիսի արմատական ձեռնարկման դեպքում, ինչպիսին հայերի տարագրությունն է) պատասխանատու է դարձնում Գերմանիային: Այս եզրակացությունն այնքան հիմնավոր է թվում, որ բուն թուրքական կողմին դրանից կառչելու հնարավորություն է տվել: Ավագ ուսուցիչ Նիպագը գրում է իր բրոշյուրում, որ մարդասեր թուրքերը տարագրության ժամանակ կատարված սահմռկեցուցիչ իրադարձություններն այլ կերպ չէին կարողանում բացատրել, քան որ իրենց կառավարությունն այստեղ ազատ չի գործել: Խոջաներն իրենց մզկիթներում քարոզում էին, որ դա գերմանացիների գործն է, որոնք այդ հրամայել էին թուրքական կառավարությանը:

Գերմանացիների հանցանքը

Այս մեղադրանքի հիմքում ճշմարտության մի հատիկ է ընկած: Տարագրությունն առաջին հերթին ռազմական միջոցառում է եղել և, ուստի, չէր կարող Թուրքիայում գտնվող գերմանացի զորահրամանատարների համար հավանաբար գաղտնիք լիներ: Իրականում ծրագիրը ներկայացվել է ֆելդմարշալ Գոլցին և նրա հավանությանն է արժանացել: Պաշտոնական իր ձևակերպմամբ այն բավականին անմեղ տեսք ուներ: Կառավարության հրամանի տեքստում ասված էր. «Հոդված 2. Զորքերի անկախ կորպուսների, բանակի և դիվիզիաների հրամանատարները պարտավոր են ռազմական անհրաժեշտության դեպքում և լրտեսության ու դավաճանության դեպքում գյուղերի կամ քաղաքների բնակիչներին առանձին կամ զանգվածաբար արտաքսել և նրանց այլ վայրերում բնակեցնել»:

Հրամաններում նախատեսված էր, որ տարագրյալների անշարժ սեփականությունը պիտի ցուցակագրվի և վերցվի պաշտոնական պահպանության, որ արտաքսյալները աքսորվում են Բաղդադի երկաթուղու տարածքները և նրանց նոր հողատարածքներ պիտի հատկացվի: Այդ ձևով, ինչպես իրականացվում է քաղաքակիրթ երկրներում անհրաժեշտ ռազմա-

կան միջոցառումները, Գոլցը հավանություն է տվել ծրագրին: Նրան պիտի կշտամբել, որ նա երկար տարիներ Թուրքիայում գտնվելով չի կանխատեսել, թե այդօրինակ միջոցառման իրագործումը թուրք իշխանավորների միջոցով ինչ ընթացք կստանա, որ նա թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից ելնելով և հաշվի առնելով ավելի ու ավելի լայնորեն ծավալվող պանթուրքիզմը, զգուշություն չի ցուցաբերել: Սակայն Գոլցը նույնպես թրքության կեղծ գնահատման մեջ է եղել, ինչպես և ուրիշները, որոնք Թուրքիան որպես զինվոր էին ճանաչում: Օսմաններն ի սկզբանե ռազմաշունչ ժողովուրդ են եղել և որպես զինվորականներ միշտ լավագույն ձևով են իրենց դրսևորել. այդտեղից է ծագում այն ասացվածքը թուրքերի մասին, որ նրանք Արևելքի միակ ջենտլմեններն են, որի հեղինակը, ինչպես հայտնի է, Բիսմարկն է: Ընդսմին շարունակ այն լիրծառությունն է ի հայտ գալիս, որ Արևելքում առանձին ժողովուրդների միմյանցից տարանջատ ապրելու հետևանքով, նաև այնտեղ, որտեղ նրանք նույն քաղաքում են բնակվում, օտարերկրացին, նույնիսկ Թուրքիայում երկարամյա ժամանակով գտնվելուց հետո էլ, առանձին ժողովուրդների բնավորությանը դեմ հանդիման կանգնում է որպես terra incognita-ի (անծանոթ երկրի) դիմաց: Մի ցայտուն օրինակ է հանդիսանում գերմանացի բրուտը՝ Նաումանի «Ասիա» ստեղծագործությունում. սա մի օրինակ, որ կարող է յուրաքանչյուր մարդ, որ, իրոք, ծանոթ է Արևելքին, հարյուրապատկել:

Ուժերի գերմանա-թուրքական փոխհարաբերությունը

Գերմանիայի մեղքն այն է, որ չգիտեն Արևելքը, ուստի և արևելքցիների նկատմամբ սխալ վերաբերմունք ունեն: Այստեղից է ծայր առնում նաև ուժերի միանգամայն այլ փոխհարաբերությունը գերմանացիների և թուրքերի միջև, քան այն, որն արտասահմանը հակված է ընդունել: Բոլորի համար այժմ միանգամայն ակնբախ է, որ Գերմանիան այս պատերազմում այնքան հզոր չի եղել, ինչպես այդ կարծում են, որ այն, միայն ամբողջ ուժերի, այդ թվում նաև դաշնակիցների ուժերի, նույնիսկ այնչափ թույլ դաշնակցի, որպիսին Թուրքիան էր, ծայրաստիճան լարումով է ի վիճակի եղել, այդպիսի հզոր գերտերություններից մեկի ճնշմանը դիմակայել: Գերմանիան միշտ հարկադրված է եղել հաշվի առնել Թուրքիային, և դա օգտագործել է թուրքական դիվանագիտությունն ամենուրեք, ամենից առաջ՝ ֆինանսական ասպարեզում: Թուրքական դիվանագիտությունն աշխարհում ամենահմուտն է, այդ է նրան սովորեցրել պատմությունը: Միայն իր դիվանագետների հնարամտության շնորհիվ հաջողվեց օսմանյան կառավարությանը պահպանել կայսրությունը՝ նրան ավելի քան մեկ ու կես հարյուրամյակ սպառնացող վերաբաժանումից: Գերմանական դիվանագիտությանն այդօրինակ գովեստ չի կարելի շռայլել: Թուրքիան իր ձեռքին մի միջոց ուներ, որով նա միշտ կարող էր գերմանական կառավարության վրա ճնշում գործադրել. պատերազմի սկզբից ի վեր թուրքական ոչ պաշտոնական միջնորդները գտնվում էին Լոզանում և այնտեղ հարաբերություններ էին պահպանում Անտանտայի հետ: Այսպիսով՝ Գերմանիան պիտի շատ մեծ ուշադրություն հատկացներ դաշնակիցներին, Գերմանիան երբեք ծայրահեղության չպիտի հասցներ իր հարաբերությունները դաշնակիցների հետ, որպեսզի ամեն ինչ խաղաքարտի վրա չդրվեր: Կար ժամանակ, որն այնքան էլ հեռու չէր հայերի դեմ թուրքական միջոցառումներից, երբ ամեն հնարավորը արվում էր հասարակությանը Թուրքի-

ան ավելի հզոր ներկայացնելու համար: Դա արքայազնի այցելության ժամանակն էր, պառլամենտական ուղևորությունների ժամանակն էր՝ Կոստանդնուպոլիս, մի ժամանակ, երբ շքանշանների տեղատարափ էր: Այդ ամենը հարկավոր է ի նկատի առնել ուժերի գերմանա-թուրքական փոխհարաբերությունները ճիշտ գնահատելու համար: Գերմանիան միշտ շատ շնորհներ է արել, բայց երբեք դաշնակցային փոխհարաբերություններում տնօրինողի դեր չի ստանձնել:

Գերմանական օգնությունը Հայաստանին

Այդուհանդերձ սակավ չեն գերմանացի դիվանագետների՝ հայերի օգտին արված քայլերը: Մենք հուսով ենք, որ շուտով կհրապարակվեն այն վավերագրերը, որոնք վկայություն կտան տարագրության դեմ գերմանական կառավարության քանիցս արված նոտաների մասին: Ցարդ միայն գերմանական ռայխստագի գլխավոր հանձնաժողովում է այդ մասին տեղեկություն տրվել, և հասարակությունը միայն այդքանով է տեղեկացված, որ գերմանական կառավարությունը հայության պահպանման համար ինչոր բան ձեռնարկել է: Այն ժամանակ մեր թուրք բարեկամները արտաքին գործերի մինիստրության կեցվածքից գոհ չին: Հայերի նկատմամբ բարյացկամությունն անպակաս է եղել: Գերմանա-հայկական ընկերությունը գոհունակություն է ապրում, որ թշնամի պետություններից՝ Գերմանիայում գտնվող հայերի վիճակը թեթևացնելու իր նկրտումներում արժանացել է կառավարության աջակցությանը: Հասարակության մեջ՝ տարագրված հայերի համար հանգանակությունները միայն սահմանափակ ծավալով կարող էին կատարվել: Իրավունք չկար բացահայտ խոսել Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին, և միայն այժմ մեծածավալ գործառույթների հնարավորություն ընձեռվեց: Այսուհանդերձ ծածուկ հանգանակություններն արժանանում էին կառավարության հավանությանը: Հանձնախումբ ուղարկելու թույլատրություն, որը կարող էր տառապյալ հայերին մեծ կենսամիջոցներ բերել, թուրքական հակակրանքը հաշվի առնելով, չառաջարկվեց, սակայն այդ առթիվ վարած բանակցություններում հեղինակավոր շրջանները մեծ կարեկցանք էին ցուցաբերում տարագրյալների սարսափելի վիճակի նկատմամբ: Բոլոր դեպքերում գերմանական կառավարության դիրքորոշումն արմատապես տարբեր էր այն դիրքորոշումից, որը նա ուներ համիդյան կոտորածների ժամանակ, երբ հանգանակություններն արգելված էին, հայ հռետորներն արտաքսվում էին, իսկ գերմանական կայսրն իրադարձություններից անմիջապես հետո կարմիր սուլթանին իր դիմանկարն էր ուղարկել: Այն ժամանակ իրականացվում էր այսպես կոչված «իրատես» քաղաքականություն, առանց որևէ ուշադրություն դարձնելու մարդասիրական զգացմունքների վրա. այս անգամ [ի հայտ բերվեց] լրիվ մարդասիրական կարեկցանք, որը պատերազմական իրադրության պատճառով և տատանվող դաշնակցին հաշվի առնելով, հնարավոր չեղավ պատշաճ կերպով իրականացնել:

Գերմանական քաղաքականության սխալները

Հաշվի առնելով հանդերձ այն ծանր կացությունը, որում գտնվում էր գերմանական կառավարությունը Հայկական հարցի առումով, կարելի է նրան նույնիսկ կշտամբել, որ նա (գերմանական կառավարությունը) ձեռ-

քից բաց է թողել այն միջոցը, որով նա, հավանաբար, իրոք ազդեցիկ ճնշում կարող էր գործադրել Թուրքիայի վրա: Նա լրիվ հրաժարվեց հասարակական կարծիքն իր դիրքորոշմանն աջակցելու համար օգտագործելուց: Այն, ընդհակառակը, գրաքննության միջոցառումների միջոցով ամեն ինչ արեց՝ Թուրքիայի դիրքն իր նկատմամբ ուժեղացնելու և չեզոք կամ թշնամի արտասահմանի դատավճիռը թուրքական բարբարոսություններին Գերմանիայի մասնակցության վերաբերյալ արդարացնելու համար: Գերմանական մամուլը լրիվ ապակողմնորոշված էր: Հայկական հարցում իշխում էր ազատ կարծիք հայտնելու դեմ սարսափելի և դաժան արգելքներ: Արժանահավատ լուրերի նույնիսկ սահմանափակ ծավալով հաղորդումն արգելվում էր, նաև այն ժամանակ, երբ այդ լուրերը սոսկ փաստեր էին հաղորդում և թուրքական կառավարության վրա որևէ հարձակումից ձեռնպահ էին մնում: Սա միայն մի փոքրիկ հատված է գրաքննության մեղքերի ծավալուն պատմությունից, որը, անկասկած, ավելի շատ ճակատամարտեր է տանուլ տվել, քան զորքը շահել է: Սակայն մեր հարցի կապակցությամբ հարկ է ուղղակի մատնանշել, թե ինչպես էր կառավարությունն ինքն իրեն վնասում:

Թուրքական կառավարությունը հայտնի դարձավ հայերի դեմ կիրառված միջոցառումների առթիվ ցուցաբերած իր դանդաղ և երկչոտ պահվածքով: Հայկական հարցի վերաբերյալ հունիսի 4-ին իր առաջին հաղորդագրության մեջ այն հատարարեց, որ իր միջոցառումներն «ամենևին հայերի դեմ ուղղված շարժում չեն»: Միայն հուլիսի 16-ի հինգերորդ հաղորդագրությամբ այն հայտնում էր, որ հավաստի հեղափոխական շարժման պատճառով «հայերն այն սահմանային գոտիներից և շրջաններից, որտեղից անցնում են ռազմաճակատի թիկունքային գծերը, հեռացվել են», որպեսզի նրանք զերծ մնան ռուսների ազդեցությունից: Օգոստոսի 27-ին Ժենևի թուրքական գլխավոր հյուպատոսը հավաստում էր մամուլում, որ «ամբողջ հայ բնակչությունը, տղամարդիկ, կանայք և երեխաները օգտվում են իշխանությունների պաշտպանության կատարյալ ապահովությունից»: Հայերի հարցում, նույնիսկ երբ ամբողջ գերմանական մամուլը Թուրքիայի կողմն էր անցել, թուրքական պնդումներն անվերապահորեն և դյուրահավատ կերպով չէին ընդունվում, այլ նույնիսկ [մամուլը] համարձակվում էր բացեիբաց հանդես գալ թուրքական կառավարության դեմ: Վանի գրավումից հետո Միլլի գործակալությունը հաղորդում էր. «180000 մահմեդականներից, որոնք բնակվում էին Վանի վիլայեթում, հազիվ 30000 են կարողացել փրկվել: Մնացյալը ենթարկվել են ռուսների ու հայերի կողմից սպանության, որոնց ճակատագրի մասին ցարդ որևէ տեղեկություն ստանալ անհնար է եղել»: Դրանից գերմանական մամուլը եզրակացրել է. «Ապացուցված է, որ 150000 մահմեդականներ հայերի զոհն են դարձել», այն դեպքում, երբ իրականում հազիվ թե որևէ մահմեդականի բան է պատահել և այդ մահմեդականների գերակշիռ մեծամասնությունը քրդերից է բաղկացած, որոնք իրենց լեռներում ապահով վիճակում էին: Եվ զարմանալի չէ, որ թուրքերն այդօրինակ աչառությունից ոգևորված հակադրվում են գերմանական կառավարության նոտաներին եռանդուն, համարյա ծիծաղելի մերժումով: Եթե գերմանական կառավարությունը փոքր-ինչ տեղ տար գերմանական հասարակական կարծիքին, ապա ի հայտ կգար, թե որպիսի նողկանքով են գերմանական ժողովրդի լայն շրջանները հակադրվում թուրքական միջոցառումներին և դա կերևար, հենց որ փաս-

տերին դույզն-ինչ իրազեկ կարողանային դառնալ, եթե բուն Թուրքիան, ի հեռուկս քաղաքակիրթ աշխարհի միահամուռ դատապարտման, այն ցինիկությունը չցուցաբերեր, որով նա գործեց Հայկական հարցում:

Այդ առումով գերմանական կառավարության մեղմ ջանքերը շատ են եղել: Երկու անգամ Բեռլինի մամուլի էջերում ընդհանրապես արգելվել է Հայկական հարցի քննարկումը: Սակայն ամեն անգամ անմիջապես դրանից հետո ստացվում էին թուրքական պաշտոնական զեկուցագրերը, որոնց լայնորեն տարածումը՝ Վոլֆի մամուլի բյուրոյի միջոցով, նրանք իրենց պարտավորությունն էին համարում: Բայց այն ժամանակ, երբ առանց այդ հրամանագրի էլ հայանպաստ հոդվածները մամուլում լրիվ արգելված էին, երբեք մամուլում հայերին թշնամաբար վերաբերվող հոդվածների պակաս չի զգացվել, որոնք հայերի բարեկամների կողմից բողոքներ են հարուցել առանց սակայն վերևների հավանությանն արժանանալու, առանց որևէ կրկնությունը կանխելու համար որևէ լուրջ քայլերի:

Քննարկումն այժմ թույլատրված է: Այդ առթիվ մենք որևէ բերկրանք չենք զգում: Քանզի մենք կանգնած ենք բեկորների մի լեռան առջև: Երբ արտասահմանի հետ անխափան առնչությունները վերստին կարելի լինի վերականգնել, այն ժամանակ միայն գերմանական հասարակությունը կիմանա, թե գրաքննչական սխալ միջոցառումների հետևանքով Գերմանիան իրեն որքան զգալի վնաս է պատճառել և դրա շնորհիվ Հայկական հարցում գերմանական դիրքորոշման վերաբերյալ արտասահմանում սխալ կարծիք ստեղծելու մեջ որքան լուրջ ավանդ է ներդրել՝ Գերմանիայի դեմ աշխարհի ընդդիմությունն առաջացնելու առումով:

"Österreich-Armenien, 1872-1936", Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr, Artem Ohandjanian, Band I-XII, Ohandjanianeigenverlag Wien, 1995, pp. 7506-7509:

Գերմանա-հայկական թղթակցություն. Թիվ 3
Հրատարակված՝ գերմանա-հայկական ընկերության կողմից
Բեռլին, 35 Շտեգլիցերի փողոց, 69
2 դեկտեմբերի 1918թ.

Գերմանա-հայկական ընկերությունը լույս է ընծայում դոկտոր Պաուլ Ռոբրպախի խմբագրությամբ մի աշխատություն Հայաստանի մասին, որը պարունակում է 140 էջ տեքստ և 120 էջ պատկերներ. գիրքը լայնորեն ընդգրկում է քննարկման ենթակա բոլոր հարցերը: Գինը սահմանվելու է շատ ցածր, հավանաբար 4 մարկից ոչ բարձր: Դրա պատվերներն ընդունում է Գերմանա-հայկական ընկերության գրասենյակը, հասցեն՝ Բեռլին Վ.35, Շտեգլեր շտրասե (փողոց) 69:

Հայերի կոտորածների պատճառները

Թուրքիայի հետ զինադադարի պայմանագրում Անտանտան իրեն իրավունք է վերապահել Արևելյան Անատոլիայում գրավել հայկական նահանգներն այն նկատառումով, որ այնտեղ կարող էին խժդժություններ տեղի ունենալ: «Ֆրանկֆուրտեր ցայտունգը»՝ առաջնակարգ այդ օրաթեր-

թը, (թիվ 305) «Թուրքիայի կապիտուլացիան» ընդարձակ հոդվածում գտնում է այդ սահմանումը ոչ բավարար հստակ: Թերթը գրում է. «Այն սահմոկեցուցիչ կոտորածներից հետո, որոնք տեղի ունեցան պատերազմի ժամանակ հայերի շրջանում, գերմանական հասարակությունն այդ իրադարձությունների մասին, որոնք մեր քաղաքականության համար հազիվ թե կանխատեսելի նշանակություն ունեին, (որոնք մեզանից թաքնված էին, - դ. Ռ.) միայն աղքատիկ ակնարկներ էինք կարողանում ընկալել, պիտի ընդսմին ընդունել, որ այդօրինակ խժդժություններ ցանկացած պահին կարող են առաջանալ կամ տեղի ունենալ»: Դրա հետ մեկտեղ թվում է պիտի շեշտվի, որ կոտորածները Հայաստանում գոնե մասամբ Անտանտայի կողմից սադրանք է եղել: Դա հաճախ էին պնդում, սակայն ցարդ դրա ապացույցը չէր բերվում:

1915 թվականին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին գերմանական մամուլում այլևայլ կարծիքներ են հայտնվել, որոնք փաստական հիմնավորման կարիք են ունեցել, որպիսին է հատկապես երիտասարդ եգիպտացի Ռիֆաթի անգլիական փողով սատարվող մեծ դավադրության առթիվ վստահելի մեղադրանքը, որը խարխսվում է թուրքական ընդդիմադիր կուսակցության դավադրությունը շփոթելու վրա, և Բրատերի բրոշյուրը. դրանք դոկտոր Լեփսիուսն իր «Զեկույցներ հայ ժողովրդի իրավիճակի մասին» գրքում ուղղակի ոչնչացնող քննադատության ենթարկեց:

Այդօրինակ օտար միջամտության կարիք երբեք չի զգացվել: Բուն Թուրքիայում բավականին պատճառներ կային հայերին հալածելու համար՝ սոցիալական, կրոնական և ազգային բնույթի: Սակայն միշտ մեծածավալ արյունահեղությունները ձեռնարկվում էին միայն կենտրոնական կառավարության հրամանով, արյունահեղություններ, որոնց իրականացման համար օգտագործում էին [ուժեր], որպես կանոն, կազմված թե՛ քրդերից, թե՛ վերջին օրերին՝ կովկասյան թաթարներից: Անդրկովկասում տեղի ունեցած մարտերից այդօրինակ կոտորածների մասին երկու զեկուցագիր կա, մեկը մարտի 16-ին Արդահանում հայերի կոտորածի մասին է, մյուսը սեպտեմբերի 14-ին Բաքուն գրավելու ժամանակ կատարված սարսափելի գազանությունների մասին է:

Հայերի կոտորածը Արդահանում

Երբ թուրքական զորքերն այս տարվա մարտին մոտեցան 1914 թվից առաջ նախկին ռուսական սահմանին, տեղի թուրքերը (այսպես կոչված աջարները) թուրք էմիսարի հրամանատարությամբ Կարսի և Բաթումի մարզերի Արդահանի, Օլթիի և Արդվինի գավառներում կազմակերպեցին ապստամբություն ընդդեմ Անդրկովկասյան հանրապետության: Նրանք այդ շրջաններում գրավեցին քաղաքներ և գյուղեր ու դրանք հանձնեցին թուրքական իշխանություններին: Այդ իրադրությունը նկատի առնելով, հայերը փախչում էին իրենց բնակության վայրերից և հավաքվում էին հիմնականում Արդահանում (7000 անձ) և Օլթիում (1500 անձ): Այդ հայերը բազմիցս Արդահանը և Օլթին լքելու և դեպի Կարսի ուղղությամբ հեռանալու փորձ են կատարել, բայց տեղի թաթարները և աջարները թույլ չեն տվել հեռանալ, վկայակոչելով, որ ճանապարհներն անվտանգ չեն և նման այլ պատճառաբանություններով: Իրականում նրանք միանգամայն այլ մտադրություն ունեին: Մարտի 15-ին Արդահան եկավ տխրահռչակ քուրդ

Աղա Արդուլան իր 200 հեծյալով հանդերձ և արժանացավ տեղի թաթարներից և աջարներից բաղկացած իշխանությունների, որոնք միացել էին ապստամբներին և անցել Թուրքիայի կողմը, ցնծալի ողջույններին: Արդուլան անձամբ համարվում էր թուրքական ծառայության մեջ գտնվող անձ:

Հաջորդ օրը (մարտի 16-ին) սկսվեց հայերի կոտորածը Արդահանում: Ականատեսները՝ վրացիները, հույները և ռուսները՝ սպաներ և ռուսական տարբեր ատյանների պաշտոնյաներ, որոնք փախուստի ժամանակ մի քանի օրով ձերբակալված են եղել Արդահանում, նկարագրել են այդ սարսափելի գազանությունները: Նրանք սեփական աչքերով տեսել են, թե ինչպես Արդուլայի հրոսակախմբերը և տեղի թաթարների ու աջարների խմբերը մոտենում էին հայերի տներին, որոնք նախորդ գիշեր հատուկ նշանով տարբերակվել էին: Նախ՝ յուրաքանչյուր տուն փակվել էր, այնուհետև ներխուժել էին ներքին շինությունները, դուրս էին քարշ տվել տղամարդկանց և գնդակահարել նրանց շեմքի մոտ: Հաճախ տղամարդիկ դուրս էին վազում տներից կամ ցատկում էին պատուհաններից, սակայն նրանք գրեթե առանց բացառության փախուստի ընթացքում գնդակահարվում էին: Եզակիներին հաջողվեց թաքնվել ձեղնահարկերում և նկուղներում: Սակայն նրանք ևս հայտնաբերվեցին և տեղնուտեղը գնդակահարվեցին: Ականատեսները տեսել են սպանվածների մեջ ոչ սակավ թվով կանանց և երեխաների դիեր: Այդուհանդերձ երիտասարդ կանանց մեծամասնությանը տեսել են առանձին տներում կալանավորված: Այդ տներից մի քանիսը, որոնց մեջ կանայք և երեխաներ էին զետեղված, հրկիզվեցին, ընդ որում ներսում գտնվողները ողջակիզվեցին:

Այս կերպ մոտ 7000 անձ կոտորվեց, որոնց միակ մեղքն այն էր, որ նրանք հայ էին ծնվել: Նույնը պատահեց այն 1500 հայերին, որոնք Օլթի քաղաքում էին հավաքվել:

Արյունահեղությունը Բաքվում

Բաքվում տեղի ունեցած արյունահեղության մասին հայտնում է Թիֆլիսի «Կավկազսկոյե սլովո» լրագիրն իր 1918թ. հոկտեմբերի 12-ի համարում. «Մի անձնավորություն, որը գտնվում էր այդ քաղաքում թուրքերի Բաքու ներխուժելու ժամանակ, պատմում է: Թուրքերը 1918թ. սեպտեմբերի 14-ին երեք ուղղությամբ ներխուժեցին քաղաք՝ Շամախինսկայա, Ստանիսլավսկի փողոցների և Սև քաղաքի կողմից: Սկսվեց կոտորածը և կողոպուտը: Կողոպուտը կատարվում էր խիստ սիստեմավորված կերպով: Տեղի թաթարների խմբերը երկու-երեք թուրք զինվորների ուղեկցությամբ ներխուժում էին փողոցները և հերթով կողոպտում էին տները: Նրանք ոչ մի բնակարան բաց չէին թողնում, նրանք չէին շրջանցում ոչ մի խանութ: Բաքվում գտնվող հայկական բոլոր տներից, որպես հրաշք, միայն մոտ 15 տուն խնայվեց: Տներն ամբողջապես կողոպտվեցին: Կողոպտիչները տառացիորեն ոչինչ չթողեցին, ո՛չ մի սկուտեղ, ո՛չ մի օգտագործված մահճակալ կամ էլ ծաղկաման: Նրանք ամեն ինչ տանում էին իրենց հետ, ծանր իրերը տանում էին սայլերով, որոնք հետևում էին կողոպտիչներին:

Նաև հայերին կոտորելը մեթոդիկ բնույթ էր կրում: Չխնայեցին ո՛չ տղամարդկանց, ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին, ո՛չ ծերերին ու հիվանդներին: Մարդասպանները ներխուժում էին տները և սպանում էին ամբողջ ընտանիքը՝ կրտսերից մինչև ավագագույնը: Միայն քչերին հաջողվեց փախչել և վերջիններս պարտական են իրենց փրկությամբ միայն այն պարա-

գային, որ իրենց տները ոչ թե Աղրբեջանի թաթարներն, այլ միայն թուրք զինվորներ էին ներխուժել: Ճշմարիտ է, արյունոտ նախճիրին տեղի թաթարների հետ միասին մասնակցում էին հավասարապես թուրք զինվորները, սակայն թուրքերն այնուամենայնիվ նվազ անողոք էին: Լինում էին դեպքեր, երբ թուրքերը փրկագին ստանալուց հետո իրենց զոհերին ոչ միայն չէին սպանում, այլև նրանց, ընդդեմ թաթարների, իրենց պաշտպանության տակ էին վերցնում: Այս վերջիններս ընդհանրապես կարեկցանքից զուրկ էին, արյան տեսքը նրանց նորանոր արյունահեղության էր գրգռում: Եթե երբեմն թուրք զինվորների դեպքում փողը կամ զոհերի աղերսանքն օգնում էր, ապա թաթարները չէին հանդուրժում որևէ բանով իրենց հետ պահել մարդասպանությունից, ոչ մի բանով իրենց գութը շարժել: Գթության աղերսանքին, փրկագին առաջարկելուն նրանք միայն պատասխանում էին. «Մենք այդ չենք ուզում, մեզ ձեր արյունն է պետք»:

Իրենց արյունոտ խժդժությունները թաթարները չէին դադարեցնում նույնիսկ հասարակական հաստատությունների մոտ: Բալախանի հիվանդանոցում բոլոր հիվանդները կոտորվեցին, բժիշկները և բուժքույրերն իրենք իրենց թունավորեցին տանջանքներից և կոտանքներից զերծ մնալու համար: Սպանվեցին նաև փախստականների մանկատների երեխաները: Երբ սկսեցին քաղաքը մաքրել դիերից, Կամենիսկոյե փողոցում այն բեռնատար ավտոմեքենայի վրա, որը դիերը քաղաքից դուրս պիտի կրեր, փախստականների ապաստարանից բարձեցին ութից մինչև տասը տարեկան որբ երեխաների 60 դի: Ո՛չ սպանված, ո՛չ էլ ողջ մնացած կանայք զերծ չմնացին պղծվելուց: Բռնաբարության ենթարկվեցին նաև մանկահասակ աղջիկները և տարեց կանայք՝ տներում և փողոցներում...

Թաթարները հետո ասում էին, որ իրենց թույլատրված է եղել երեք օր շարունակ սպանել և կողոպտել:

Շատ դժվար է զոհերի ստույգ թվաքանակը որոշել: Բոլոր դեպքերում այն շատ մեծ է: Թաթարական շրջաններում սպանվածների թիվը 8000 են համարում, հայերի տվյալներով այն 30000 է կազմում: Ամբողջապես բնաջնջվել է Արմենիքենդի և Սև քաղաքի հայ բնակչությունը:

Երեք օր տևեց այս սահմռկեցուցիչ մարդասպանությունը...

Երբ սպանությունը դադարեց, սկսվեցին ձերբակալությունները: Քաղաքում մնացած գրեթե ամբողջ հայ մտավորականությունը բանտ նետվեց: Հայերին Բաքվից թույլ չէին տալիս դուրս գալ, ում բախտ էր վիճակվում մեկնել, նրան էլ սպառնում էին ճանապարհորդության վտանգները:

Կալանավորների վիճակը դժնդակ է: Շատ դժվար է նրանց դրսից օգնություն ցույց տալը: Ձերբակալության պատճառն ակնհայտ է: Այն հարցին. «Ինչո՞ւ եք կալանավորել» հետևում է պատասխան. «Դա անհրաժեշտ է, և այդ պատճառով էլ մենք ձերբակալում ենք, ի՞նչ հարկ կա, որ պատճառը պարզաբանվի»: Ցարդ տեղի են ունենում հավաքներ փողոցներում, և հայերը, որոնք հայտնվում են ամբոխի մեջ, ձերբակալվում և բանտ են տարվում:

Կարճ ասած՝ հայերի վիճակը Բաքվում սարսափելի է: Եթե դրսից ոչ մի օգնություն չգա, բազում հայեր սովամահ կլինեն:

Թուրք հրամանատար Հալիլ փաշայի գերմանացի օգնական սպան Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին Թիֆլիսում հետևյալ բառերով արտահայտեց իր տպավորությունը սարսափների մասին. «Բարբարոսությունները, որոնք տեղի ունեցան Բաքվում,

աննկարագրելի են: Որպես քրիստոնյա և եվրոպացի իմ ուժերից վեր է այդպիսի սարսափների ականատես լինելը, ես հենց այսօր երևկոյան Հալիլ փաշային կներկայացնեմ իմ հրաժարականը: Սպանությունը կատարվում է բարբարոսաբար, և ամբողջ քաղաքը կողոպուտի ենթարկվեց: Ես փողոցներից մեկում տեսա 20-ից մինչև 25 կապկպված հայ և նրանց մոտ մի պահակ: Նրանց ճակատագիրն ինձ համար պարզ էր, և ես մեծ ջանքերի գնով նրանց փրկեցի: Բայց որքան այդօրինակ դեպքեր պետք է լինեն, որոնք մնացին առանց օգնության: Երբ մենք անցնում էինք փողոցներով, շարունակ տներից լսում էինք օգնության կանչող ձայներ: Որոշ կանչերի մենք կարողացանք հետևել, բայց որքա՞ն բազում կանչեր անարձագանք մնացին: Մենք ընդամենը չորս գերմանացի էինք և չէինք կարող շատերին օգնել, քանզի [մահմեդականների] վարքագիծը նաև մեր նկատմամբ թշնամական էր: Հալիլ փաշան անմիջականորեն մեղավոր չէ սարսափների համար: Ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրա. նրանք կարող էին, եթե ցանկանային, կանխել կոտորածները և կողոպուտները: Դրանք տեղի ունեցան ոչ միայն զորքերի քաղաք ներխուժելու ժամանակ, այլև հետագայում: Ես այն տպավորությունն եմ ստացել, որ կոտորածները վաղօրոք էին ծրագրավորված: Եվ այդ է պատճառը, որ թուրքերն ամեն ինչ արեցին արշավանքին գերմանական զորքերի մասնակցությունը թույլ չտալու համար»:

Թուրքերի գերիշխանությունը Բաքվում երկար չտևեց: Հիմա այդ քաղաքը նորից անգլիացիների կողմից գրավված է:

Իրադարձությունները Նուխիում և Արեշում

Բաքուն գրավելուց հետո Ելիզավետպոլի գավառում ևս նմանօրինակ կոտորածներ տեղի ունեցան: Թիֆլիսում Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին այնտեղի շրջանից մի հոգևորականի ներկայացրած զեկուցագրից մենք մեջբերում ենք հետևյալը.

«Նուխի և Արեշ գավառակների հայկական գյուղերը, այն է՝ Մեծ և Փոքր Սոգութլուն, Հոխկախին, Տոֆիկը, Հիրիկը, Նիժը և Վալեթը, որոնք վերջին կոտորածների ժամանակ զերծ էին մնացել կոտորածներից, վերջին օրերին ենթարկվեցին բռնությունների, դաժանությունների և կոտորածների: Գյուղացիները, երբ իմացան, որ թաթարական հրոսակախմբերին և օսմանյան զորքերին արգելվել է նրանց սպանել և իրենց գյուղերը հրկիզել, վերսկսեցին իրենց գրեթե դադարեցված դաշտային աշխատանքները: Նրանք հավաքում էին հացահատիկի բերքը և Մեծ Սոգութլու գյուղում գտնվող փաշայի հրամանով իրենց սայլերով իրենց բանջարեղենի և հացահատիկի բերքից երկու տասնորդ բերք առաքեցին Աղդաշ: Բայց Բաքուն գրավելուց հետո փոխվեց թուրք պարետների և զինվորների վարքագիծը: Դաշտային աշխատանքները վերջացնելուց հետո գյուղի բնակիչները կարծում էին, որ իրենք իրենց պարտականությունները թուրքերի հանդեպ կատարել են: Սակայն հիմա էլ սկսվեցին սարսափելի հանցագործությունները. նախ թուրքերը կալանքի վերցրեցին Մեծ Սոգութլու գյուղի քահանա Սարգիս Տեր-Արսենյանին՝ 115-ամյա ծերունուն և տեր հայր Ներսես Տեր-Հովսեփյանին, ինչպես նաև աչքի ընկնող բոլոր անձանց, տարան նրանց գյուղից դուրս և սպանեցին: Հաջորդ օրը ժողովեցին գյուղի բոլոր երիտասարդներին, գյուղից մի քանի վերստ հեռացրին և նույն կերպ գնդակահարեցին: Միայն գյուղի սակավաթիվ բնակիչների հաջողվեց

փրկվել: Այնուհետև եկավ երիտասարդ գեղեցիկ կանանց հերթը, որոնց տարան թաթարական գյուղերը և պղծեցին: Ի վերջո թուրքերը հավաքեցին 5-ից մինչև 10 տարեկան երեխաներին և մտրակներով հարվածելով տանջամահ արեցին: Սարսափահար գյուղացիները դիմեցին մահմեդական հոգևորականությանը և իրենց կյանքը փրկելու նպատակով իսլամ ընդունելու թույլատրություն էին խնդրում, բայց բացասական պատասխան էին ստանում: Նրանց ասում էին, որ Նուխիի և Արեշի տարածաշրջանից մարդկանց հիշողությունից պիտի չքանա հայությունը:

Որոշ կանանց և երեխաների հաջողվեց փրկվել կոտորածից, սրանք անհրաժեշտ օգնության և աջակցության կարիք ունեն, որպեսզի սովամահ չլինեն: Իրավիճակն այնչափ սահմռկեցուցիչ է և տեղի ունեցած չարագործություններն այնքան նողկալի, որ մարդիկ պատրաստ են ցանկացած երկրի քաղաքացի դառնալ և նույնիսկ մի այլ կրոն ընդունել»:

Թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ

Հոկտեմբերի 28-ի թվակիր մի նամակ ենք ստացել Կոստանդնուպոլսից, որ վերջին օրերին մեծ փոփոխություն է տեղի ունեցել հայերի նկատմամբ վերաբերմունքի մեջ: Հայերը կարող են առանց վախ զգալու միմյանց այցելել, աքսորվածները վերադառնում են և նրանց վերադարձը դյուրացվել է: Թուրքիան մտադիր է Երևանում մի դիվանագիտական ներկայացուցիչ հավատարմագրել Հայաստանի հանրապետությանն առընթեր և խնդրում է նույնը, վերջինիս կողմից, անել Կոստանդնուպոլսում. գերմանական կողմը նույնպես մի հյուպատոս է նշանակել Երևանի համար, որը Դամասկոսում նախկին գլխավոր հյուպատոս դոկտոր Բրոդեն է:

Բաքվում կոտորածների առիթով հայկական ներկայացուցչությունը Կոստանդնուպոլսում առաջարկություններ է արել, որոնց շնորհիվ կառավարությունը կարգադրել է այնտեղ կալանավորված հայերին ազատ արձակել: Ի միջի այլոց՝ հոկտեմբերի 25-ին հրապարակվել է թուրքական նոտա բառացիորեն հետևյալ բովանդակությամբ. «Ղեկավարվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանումները խստորեն պահպանելու ցանկությամբ կայսերական օսմանյան կառավարությունը կարգադրել է կայսերական այն զորքերը ետ քաշել, որոնք գտնվում են այդ պայմանագրով Թուրքիային հատկացված սահմաններից այն կողմն ընկած Կովկասի շրջաններում: Տարածքների ազատումը ըստ հնարավորին կարճ ժամանակում պիտի տեղի ունենա և պիտի տարածվի այն շրջանի վրա, որը դուրս է գտնվում օսմանյան հին սահմաններից և Կարսի, Բաթումի ու Արդահանի սանջակներից, որոնք վերջին հանրաքվեով իրականացրին իրենց միացումը մայր երկրի հետ»:

Թուրքիայի ռազմական մինիստրի հոկտեմբերի 29-ի թվակիր ընդարձակ նոտան տեղեկացնում է, որ նա հրամայել է «...վեց շաբաթվա ընթացքում՝ հոկտեմբերի 24-ից հաշված, բոլոր տարածքներն ազատել, որոնք օսմանյան զորքերի կողմից, Բրեստ-Լիտովսկի [պայմանագրով սահմանված] սահմաններին հակառակ, գրավված են»: Դրանով իսկ թուրքական կառավարությունը վերջապես հանգամանքների ճնշման ներքո կատարեց այն պահանջը, որ արդեն ամիսներ ի վեր խիստ եռանդուն տոնով ներկայացնում էին գերմանական կառավարությունը և գերագույն հրամանատարությունը: Կարելի է ենթադրել, որ տարածքների ազատումը

նույնիսկ զգալիորեն ավելի արագ կկատարվի, քան այն ժամանակ նախատեսված էր և այն չի դադարեցվի Բաթումի, Կարսի և Արդահանի շրջանների սահմանների վրա: Դրա շնորհիվ վրացիների և հայերի տարածաշրջանները վերադարձվել են, որոնք նրանք իրենց պետականության կայացման համար հույժ անհրաժեշտ են համարում. թուրքերը բավականին հանդուգն էին դարձել Բաթումը գրավելուց հետո, նաև Բաքուն էին պահանջում: Ինչպես գրում էր «Աքի» լրագիրը. «Մենք մեր նոր նավահանգիստ Բաթումի համար ռուսներից անկախ մի տարածքի (հինտերլանդի) կարիք ունենք»: Շրջաններն ունեն նաև ոչ սակավ թվով «համարյա համատարած մահմեդական բնակչություն», ինչպես տարօրինակ կերպով գրում է «Նոյե օրիենտը» (հատոր 3, տեսոր 10): Ըստ 1916թ. «Կավկազսկի կալենդարի» Բաթումի շրջանում բնակվում էին 5716 ռուս, 3666 հայ, 69740 վրացի և ընդամենը 1718 մահմեդական, Կարսի շրջանում (Արդահանի հետ միասին) բնակվում էին 16466 ռուս, 106408 հայ, 34921 վրացի և 86826 մահմեդական: Հետևաբար քրիստոնյա բնակչությունը գերակշռում էր մեծապես: Վերջին լուրերի համաձայն Բաթումի և Կարսի լքումը թուրք զորքերի կողմից արդեն ընթացքի մեջ է, և անգլիացիները զորքեր են ուղարկել Կոստանդնուպոլսից՝ Բաթում:

Հայերը և վրացիները

Կովկասից ստացված հաղորդումների համաձայն հայերը թուրքերի հեռանալուց հետո զենք գործադրելու սպառնալիքով պահանջել են վրացիներից ազատել վրացիների կողմից գրաված Ախալքալաքի և հայերով բնակեցված մյուս շրջանները: Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցիչը փորձել է միջամտել, սակայն ցարդ, ըստ կիևյան թերթերի չհաստատված տեղեկությունների, բանը հանգում է պատերազմի: Հայերը երեք անգամ պիտի որ հաղթած լինեն վրացիներին և կանգնած պիտի լինեն Թիֆլիսի մատույցների մոտ: Հետագա հաղորդումների համաձայն հայերը պիտի որ նույնիսկ քաղաքը գրաված լինեն:

"Österreich-Armenien, 1872-1936", Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr, Artem Ohandjanian, Band I-XII, Ohandjanianeigenverlag Wien, 1995, pp. 7510-7515:

Գերմանա-հայկական թղթակցություն. Թիվ 4
Հրատարակված՝ գերմանա-հայկական ընկերության կողմից
17 դեկտեմբերի 1918թ.

Հայաստանը խաղաղության վեհաժողովում

ԳՀԹ. Ինչպես մենք Շվեյցարիայի միջոցով տեղեկացանք, Անտանտան որոշել է Հայաստանին, որին այն ճանաչում է որպես պատերազմող պետություն, նույն կարգավիճակով, ինչպես Հարավսլավիային, թույլատրել մասնակցելու խաղաղության վեհաժողովին: Դրանով իսկ պիտի Թուրքիայի կազմում գտնվող հայկական նահանգների ճակատագիրը որոշվի: Պիշոնը հավաստել է ֆրանս-հայկական միավորումը, «որ

ֆրանսիական կառավարությունը ոչինչ ձեռքից բաց չի թողնի հանուն հայերի գործը պաշտպանելու»: Եվ լորդ Ռոբերտ Սեսիլը համայնքների պալատում իր ճառերից մեկում շեշտել է. «Բրիտանական կառավարությունը մեծապես հիասթափված կլինի, եթե Հայաստանում թուրքական կառավարման դույզն ինչ հետք այսուհետև մնա»: Գերմանիայի ճիշտ ընկալված շահերը տվյալ դեպքում զուգահեռ են Անտանտայի նույնիմաստ շահերին: Արևելքում տնտեսական գործունեության համար, որը մեզ կարող է վիճակվել, հայկական օրինական կառավարումն անհամեմատ ավելի արժեքավոր է, քան մինչև այժմ եղած թուրքական տնտեսվարումը:

Առայժմ հայկական շահերը բանակցություններում ներկայացնելու է մի պատվիրակություն Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ, որը բաղկացած է Շվեցարիայի, Եգիպտոսի, Անգլիայի, Բուլղարիայի և Ամերիկայի հայկական գաղութների պատգամավորներից: Խաղաղության վեհաժողովին մասնակցելու համար հայկական ներկայացուցչության վերջնական նշանակումը կատարելու է Երևանում գտնվող հայկական կառավարությունը, որը Փարիզում գտնվող հայկական ազգային խորհրդի կողմից Հայաստանի միացյալ պետության անկախությունը հռչակելուց հետո դիտվելու է որպես միացյալ համահայկական կառավարություն:

Հայ-վրացական հարաբերությունները

ԳՀԹ. Լոռիից և Փամբակից թուրքերի հեռանալուց հետո հայկական այդ շրջանները գրավեցին հայկական զորքերը: Դրանից հետո վրացիները որոշ քանակով զորք և մի զրահագնացք ուղարկեցին դեպի սահմանը և պահանջեցին հայ զորահրամանատար Դրոյից ազատել երկաթգծից հատվածը՝ մինչև Շահալի կայարանից այն կողմ: Երբ Դրոն իր կառավարության ցուցումով ձեռնարկեց միջոցներ եռանդուն պաշտպանության համար, վրացիներն իրենց համաձայնությունը հայտնեցին հայերի կողմից Լոռիի գրավման առթիվ, սակայն հայերի ամեն մի հետագա պահանջը Ախալքալաքի՝ նույնպես հայկական մի շրջանի նկատմամբ, որը սակայն գրավված է վրացիների կողմից, դիտել որպես casus belli (պատերազմի առիթ): Այդպիսին էր իրերի վիճակը մինչև հոկտեմբերի վերջը, և այն ավելի սրվեց՝ վրացական զորքերի կողմից Լոռիի հյուսիսում գտնվող գյուղերում չարագործություններ և բռնագրավումներ կատարելու (որոնք բազմիցս ընդհարումներ էին առաջացնում հայ գյուղացիների և վրացի զինվորների միջև) և Հայաստանի կառավարության դրամագլուխը՝ 20 միլիոն ռուբլի գումարով, Թիֆլիսում բռնագրավելու հետևանքով: Արդյոք հայ-վրացական հարաբերությունները այդ ընթացքում ավելի՞ կսրվեն և բացահայտ թշնամանքի՞ կվերաճեն, ինչպես մենք ըստ լուրերի նշել ենք ԳՀԹ թիվ 3-ում, տակավին որոշակիորեն չի կարելի հավաստել:

Հոկտեմբերի վերջին վրացական կառավարությունը հրավիրել է Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնականների անդրկովկասյան կառավարություններին՝ կոնֆերանսի իրենց փոխհարաբերությունները պայմանագրային կարգավորման բերելու և խաղաղության կոնգրեսում Անդրկովկասը միասնաբար ներկայացնելու խնդիրը լուծելու համար:

Հայ-թաթարական հարաբերությունները

ԳՀԹ. Հոկտեմբերի վերջին ստացված լուրերի համաձայն թաթարները թուրքերի աջակցությամբ գրավել են Ղարաբաղը և հայազգի ղեկա-

վարներին այնտեղ ձերբակալել են: Գյուղացիներին զինաթափել են, որպեսզի նրանց անպաշտպան դարձնեն: Թաթարները նորից են սկսել Բաքու-Թիֆլիս երկաթուղու տարածքում հայ ուղևորներին սպանել:

Այդ ընթացքում դաշնակից զորքերը մուտք են գործել Բաքու, Բաթում և Անդրկովկասի այլ վայրեր և ազդու միջոցառումներ են ձեռնարկել թուրք-թաթարական սարսափներին վերջ դնելու համար:

Լուրեր Հայաստանից

ԳՀԹ. Կռալիցիոն կառավարություն կազմելու ջանքերը շարունակվելու են: Էսեռները հրաժարվում են մտնել կառավարության կազմի մեջ: Սոցիալ-դեմոկրատների հետ բանակցությունները շարունակվելու են: Ազգային դեմոկրատները հակված են ստանձնել արտաքին գործերի, ֆինանսների և մշակույթի մինիստրների պաշտոնները:

Հայաստանում մեծ է հացահատիկի սղությունը, և երկրին մի քանի ամսով սովն է սպառնում, եթե առնվազն մեկ միլիոն փութ հացահատիկ չներմուծվի: Հայաստանի կառավարությանը հաջողվել է Կուբանում և Ուկրաինայում հացահատիկի մեծ քանակություններ գնել: Կառավարության լիազորները արդեն գնելու դրամով հանդերձ ուղարկվել են, որպեսզի հացահատիկն ընդունեն և առաքումն իրականացնեն:

Հայ զորավար Անդրանիկի սպանության մասին լուրը չի հավաստվում:

Հայաստանի պետականության կարողությունը

Դոկտոր Գ.Շտրեզեմանի կողմից հրատարակվող «Դոյչե շտիմմե» շաբաթաթերթի թիվ 40-ում Պաուլ Դասլինգը Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով Բաթումի, Կարսի և Արդահանի տարածաշրջանների հատկացումը Թուրքիային պատմական և մշակութային առումով արդարացի է համարում, քանզի դրանք մինչև 1878 թվականը պատկանել են Օսմանյան կայսրությանը և որպես միասնական ցեղ-բնակչություն՝ միայն մահմեդականների մասին կարող է խոսք լինել, այն դեպքում, երբ հայերը բազում դարեր սեփական պետականություն չեն ունեցել և միայն իրենց սեփական լեզուն են պահպանել և չեն պահպանել [նույնիսկ] սեփական ազգային ցայտուն մշակույթը»: Այդ փաստարկման տրամաբանության վրա այլևս չենք կամենում ծանրանալ: Սակայն որոշ դիտողություններ այդ կարծիքի մասին, այդուհանդերձ, անհրաժեշտ է, [մասնավորապես այն մասին], որ հայերը իրր ազգային մշակույթը չեն պահպանել: Վերոհիշյալ հոդվածին պատասխանել է Հայաստանի հանրապետության Բեռլինում լիազոր ներկայացուցիչը «Դոյչե շտիմմե» շաբաթաթերթի թիվ 46-ում: Այնտեղ նշված է. «Հայերը, բացի իրենց սեփական լեզվից և՛ իրենց հարուստ գրականությունը, և՛ զարգացած մամուլը, և՛ սեփական քարոյական ավանդույթներն ու սովորությունները, և՛ իրենց ուրույն եկեղեցին ունեն, որը ազգի հոգևոր կերտվածքի հետ սերտաճած դիմակայել է իսլամական փորձությունների բոլոր գրոհներին և ռուս-ուղղափառների հարձակումներին ու պահպանել է իր ինքնուրույնությունը չորրորդ դարից մինչև այսօր: Եվ նրանք ամենից առաջ ունեն արվեստի սեփական պատկերացումը, որը մեծապես դրսևորվել է հատկապես ճարտարապետության մեջ»:

Այսօրինակ ինքնին հասկանալի իրողություններ իսկական գիտակների համար ակնհայտ են, սրա հետ գրեթե բոլորը համաձայն կլինեն: Պարոն Պաուլ Դասլինգն այդուհանդերձ փորձում է տակավին առարկություններ առաջ քաշել:

Հայկական պատվիրակությանն ուղարկած հետգրության մեջ նա բացատրում է.

«Որքան քիչ կկարողանային հրեաներն իրենց սեփական կրոնի գոյությունից, իրենց ուրույն, հատկապես սինագոգի կառուցման հինավուրց ճարտարապետությունից, իրենց սեփական լեզվից և սեփական ժողովրդական բարքերից հետևություն անել, որից ելնելով իրավասու կլինեին հրեական մի կայսրության, ասենք, Լեհաստանում հիմնադրելը պահանջել, նույնքան քիչ կարող են դա հայերը պահանջել այն բանից, ինչ մնացել է նրանց վաղեմի մշակույթից: Ոչ մի վայրում նրանք ներփակ ցեղախմբով չեն բնակվում, առավելագույնս՝ Թուրքիայի որոշ վայրերում, որոնք տարածքային առումով իրարից շատ հեռու են ընկած, [չունեն] թվային գերակշռություն, այնպես որ նրանք առավելագույնս կարող էին Օսմանյան կայսրության սահմաններում որոշ քանակի փոքր ինքնավարությունների պահանջ ներկայացնել: Եվ, ընդսմին, նրանց ազգային ուրույնությունը ոչ մի անգամ այնպես ցայտուն չի դրսևորվել, ինչպես հրեականը:

Կրոնով հայերը բաժանվում են երկու խստորեն բաժանված հայ առաքելական և հռոմադավան կաթոլիկ դավանանքի հետևորդների խմբերի: Այն, ինչ տվել է հայ արվեստը, եղել է բազում դարեր առաջ. ազդեցությունը սուրբ Ստեփանոսի և Քյոլնի տաճարների վրա պիտի անվիճարկելի համարել, այդ, սակայն, երևում է նշված կառույցների բաղկացուցիչ մասերի վրա, որոնք կառուցվել են արդեն մի քանի հարյուրամյակ առաջ (sic!) Հայկական ծագում ունեցող նշանակալից գրական գործերն էլ վաղուց անցած ժամանակների արգասիք են: Դրանից ավելի ինչ որ այսօր ստեղծվել է՝ համարժեք չէ ուրույն ազգայինին, ուրույնը դրանում միայն հայոց լեզուն է, որի գոյությունը վիճարկման ենթակա չէ: Եթե սրանից հետո հայերը սեփական պետություն կամ, ըստ իրենց բաժան-բաժան սփռվածությանը, մի ամբողջ կայսրություն, փոքր կայսրություն են կամենում պահանջել, ապա Փոքր Ասիայի հույները ևս ավելի մեծ իրավունքով այդ կկարողանային անել՝ նրանց բնակավայրերը ավելի ամուր են կապակցված, նրանց մշակույթն ավելի կոմպակտ է թուրքական կայսրության մեջ, քան հայերի մշակույթը»:

Պարոն Դասլինգի առարկությունները մենք այսչափ ընդարձակ ենք մեջբերում, քանզի հայկական գործերի նրա մեկնաբանությունները գերմանական մամուլի մի մասի համար ուղղակի բնորոշ են: Գերմանա-թուրքական շահերի ընդհանրության ժամանակից ի վեր Մերձավոր Արևելքի նկատմամբ ցուցաբերվող շահերը հանրահայտ են, և մենք մամուլում շատ հաճախ ենք նմանօրինակ դատողությունների հանդիպում հայերի վերաբերյալ: Ընդհանրապես պետք է ասել, որ հիմնավորման հավաստիությունը գրեթե միշտ, ինչպես և այս դեպքում, հակադարձ համեմատական է իրերի դրության իմացությանը: Հայաստանը այս կարգի գերմանացի լրագրողների համար terra incognita (անծանոթ երկիր) է: [Գերմանացի լրագրողը] ո՛չ Հայաստանի աշխարհագրությունը, ո՛չ նրա պատմությունը, ո՛չ նրա կրոնական, ո՛չ մշակութային իրավիճակը գիտե, սակայն այդ նրան հետ չի պահում անառարկելի վստահությամբ Հայաստանի նկատմամբ

ոչնչացնող դատավճիռ կայացնել: Ցավոք, ինչպես ներկա օրինակն է ցույց տալիս, շատ հեղինակավոր թերթերը ևս հաճախ այսօրինակ ապակողմնորոշող գրությունների զոհ են դառնում:

Հակաճառության մեջ ամեն ինչ կերած է: Հեղինակը խոսում է հայերի կրոնական առումով իրարից խիստ տարանջատված հատվածների մասին: Նա ուրեմն չգիտի, որ հռոմեադավան հայ կաթոլիկները սոսկ 3 %-ն են կազմում հայ ժողովրդի, և մնացյալները պատկանում են կուռ կազմակերպված հայ ազգային եկեղեցուն, որն արդեն Հայաստանի պետականության ունակության ապացույցն է: Եվ ոչ միայն դա. հայ ժողովուրդը, չնայած իր տարաբաժանմանը երեք կայսրությունների միջև, ի դեմս Էջմիածնում նստավայր ունեցող կաթողիկոսի ունի ընդհանուր հոգևոր գլուխ, տաճկահայերը 15-րդ դարից ի վեր իրենց պատրիարքի ղեկավարությամբ, ինչպես այլ քրիստոնյաները, մի առանձին ազգ՝ միլեթ, են կազմում, մի պետություն՝ պետության մեջ, և նրանց հոգևոր գլուխը մի շարք զուտ պետական ֆունկցիաներ ունի: Դասական ժամանակաշրջանի հայկական ճարտարապետությունը ոչ մի դեպքում երկրորդական նշանակություն չունի արևմտյան արվեստի զարգացման համար. Շտրժիգովսկու դարակազմիկ հայտնագործությունները ցույց են տալիս հայ ճարտարապետության ճիշտ տեղը, որը ցարդ վերագրում էին բյուզանդական կառուցողական ոճին. հայ շինարարական արվեստը ցույց է տալիս այն հիմքը, որի վրա զարգացավ ռոմանական և գոթական ոճը: Եվ ով գիտի այն դերը, որ խաղացել են հայկական ճարտարապետությունը, հայկական թատրոնը, հայկական երաժշտությունը պարզապես մինչև վերջին ժամանակները Թուրքիայում և տակավին դեռ խաղում է, ով գեթ ինչ-որ բան գիտի թուրքերեն լեզվի քերականական ձևավորման մեջ հայերի ծառայությունների մասին, ով կարդացել է հայ նորագույն գրականության որոշ գործեր՝ Ռաֆֆուց մինչև Աեարոնյան և Իսահակյան, նա երաշխավորված կլինի այդօրինակ սխալներից, որոնք տեղ են գտել բերված հոդվածում:

Այս ամենն, իհարկե, հայկական մշակույթի առումով ինձ համար ապացուցված է: Գլխավոր հարցն այն է. արդյոք հայերը այդօրինակ կոմպակտ բնակություն ունե՞ն, որ իրենց սեպհական պետություն հիմնելու պահանջ կարող են ներկայացնել: Այժմ վերոհիշյալ հոդվածի հեղինակը գերմաներենով ցույց է տալիս իր տգիտությունը: Ինչպես էր կարող նա ընդհանրապես տաճկահայերին համեմատել Լեհաստանի հրեաների կամ Փոքր Ասիայի հույների հետ, որոնք երկուսն էլ այնտեղ գաղութաբնակներ են, մինչդեռ հայերն օսմանյան նահանգներում իրենց բուն հայրենիքն ունեն, ուր նրանք Քրիստոսի ծննդից յոթ դար առաջ արդեն բնակվում էին: Բանը հենց ճիշտ ընդհակառակն է. հայերն իրենց մեծամասնությամբ բնակվում են սահմանակից շրջաններում, հույները, դրան հակառակ, առանձին տարանջատված բնակավայրերում, իսկ հրեաների մասին խոսք էլ չի կարող լինել:

Պատերազմից առաջ Էրզրումի վիլայեթում բնակվում էր 203400, Սվազի վիլայեթում՝ 200000, Խարբերդի վիլայեթում՝ 131200, Դիարբեքիրի վիլայեթում՝ 81700, Վանի վիլայեթում՝ 192200, Բիթլիսի վիլայեթում՝ 196000, ընդամենը՝ 1004500 հայ, դրան ավելացրած Կիլիկիայում, Ադանայի և Հալեպի երկու վիլայեթներում՝ ևս 242950: Ճշմարիտ է, հայերը ոչ մի վիլայեթում մեծամասնություն չեն կազմում, նրանք ամենուր կազմում են բնակչության 40-45 %-ը: Դրա պատճառը սակայն մարզերի սահմանազատումն է,

որը թուրքերը միտումնավոր են կատարել, որպեսզի այդպիսի արդյունքի հասնեն:

Այստեղ հարկ կլինի հեռուն գնալ, հանգամանորեն ապացույցներ բերել, որ վիլայեթների մի այլ սահմանազատման դեպքում հայերի կոմպակտ բնակությունը կասկածից դուրս կլիներ: Եվ այնուհետև՝ այդ տարածաշրջանների հայերի հետ բնակվողները մեծ մասամբ քրդերն են, կիսավայրենի վաչկատուն մի ժողովուրդ, որը զուրկ է որևէ մշակույթից. քրդերը չունեն տակավին սեփական որևէ դպրոց, նրանց մասին խոսք կարող է լինել որպես որևէ պետության օբյեկտի, այլ ոչ թե որպես սուբյեկտի մասին:

Ի վերջո. հայերի պետականություն ունենալու ունակության խնդրից մի՞թե իրադարձություններն առաջ չեն անցել: Մենք արդեն ունենք հայկական մի պետություն՝ Հայաստանի հանրապետությունը՝ Անդրկովկասում, Երևանով հանդերձ՝ որպես մայրաքաղաք. մի տարածաշրջան, որին Կարսի մարզն առանց հետագա տարածման պիտի միանա և քանզի այն հիմնականում հայերով է բնակեցված, պիտի այն միակցվի: Եվ Տաճկական Հայաստանի առումով սեփական ինքնավարություն հիմնելու մասին նույնչափ նվազ խոսք կարող է լինել, որչափ Հայաստանի Հանրապետությանը միակցելու մասին, որին այն անմիջականորեն միակցվելու է: Եթե [խոսվում է այն մասին, որ] արդեն շատ վաղուց է, որ հայերն իրենց սեփական պետությունն ունեին, հապա բանն ի՞նչ վիճակում էր հույների առումով, երբ նրանք թուրքական լծից ազատագրվեցին: Հարցն ի՞նչ վիճակում էր բուլղարացիների մոտ, որոնք նույնիսկ իրենց հին լեզուն էին մոռացել և իրենց նոր պետականությունը հիմնելիս կուլտուրայից զուրկ գեղջուկներից բաղկացած ժողովուրդ էին: Հայերի մոտ միայն մի հոգս կարող է ծագել, որ նրանց հույժ առաջ ընթացած քաղաքական կուլտուրան կարող է խանգարել պետության կենսականության միասնականությանը: Այն, որ Հայաստանն ինքնին ունակ է ինքնուրույն պետություն կազմելու, իրազեկների կասկածն ամենևին չի հարուցում: Ընդհակառակը՝ այնպես, ինչպես նորաստեղծ Հայաստանի հանրապետության մեջ է ազգային փոքրամասնությունների խնդիրը լուծված, կարող են որոշ տարածաշրջաններում հայկական պետությունից որպես ընդօրինակման միջոցառումներ ակնկալել:

"Österreich-Armenien, 1872-1936", Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr, Artem Ohandjanian, , Band I-XII, Ohandjanianeigenverlag Wien, 1995, pp. 7518-7520: